

2875



ԼԵՆԻՆԸ
ՅԵԿԱ
ԿԱՐՄԻՐ
ԲԱՆԱԿԵ

ՅԿ26
\$ - 97

թթ.
ՏԱՐՄԱՆ
676-40

3K26
4-87

Կ.

Ն. ՖՐԵՆԿԵԼ

08 JUN 2005

14 NOV 2009

ԼԵՆԻՆ
ՅԵՎՀԵ
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ
1939

20.09.2014

[ԵՐԿ. 92] (Լենին) 2875 (Մ) 1917

Կարմիր Բանակը կազմակերպեց, դատիքաբակեց, ան-
կարտելի գարձրեց մեր Լենինյան բոլշևիկյան մեծ կուսակ-
ցությունը:

Լենինը—մարդկության հանճարը, պրոլետարական Հեղա-
փոխության մեծագույն ստրատեգը, բոլշևիկների կուսակցու-
թյան առաջնորդն ու կազմակերպիչը։ Կարմիր Բանակի կադ-
մակերպիչն ու առաջնորդն եք։ Պրոլետարական Հեղափոխու-
թյան զենքած ուժերի շինարարության բոլոր կարևորագույն
հարցերը կուսակցության կողմից մշակված են լենինի ցու-
ցումների համաձայն։

Լենինյան զեկավարությունն այն հզոր ուժն է, վորը քա-
ղաքացիական պատերազմի դաժան ճակատամարտերում Կար-
միր բանակի համար ապահովեց նրա մեծ և սպանծալի հաղ-
թանակները։

ԱՌՈՋԵՒԱՎ

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР





Н. Френкель
Ленин и Красная армия
Гиз Арм. ССР, Ереван ул. Ленина 65

20452

Պանետարքներ բոլոր յերկրների, միացե՛ք

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР



ԼԵՆԻՆԻ ՍՏԵՂԾԱԾ ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԶՈԿԱՏՆԵՐԸ

Պրոլետարական հեղափոխության հանճարեղ սուաջնորդ Վլադիմիր Իլյիչ Լենինն ասում էր, վոր պատմական մեծ հարցերն ուժով են վճռվում։ Ժոմանակակից պայքարում այլպիսի ուժ և հանդիսանում ուղղմական հզոր կազմակերպությունը։ Յետ Լենինն աշխարհում առաջին անգամ ստեղծեց բանվորների և գյուղացիների ուղմական կազմակերպությունը—Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը։ Կարմիր Բանակն այժմ, ինչպես և քաղաքացիական պատերազմում, այնպիսի ուղմական կազմակերպություն է, վորն իր հզորությամբ ի վիճակի յե վճռե-

Ու պատմական մեծ հարցերը։ Կարմիր Բանակի մարտիկները, հրամանատարներն ու քաղաշխատողները նրա 21-րդ տարեդարձի որը հանդիսավոր կերպով յերդվեցին հմտությամբ, արիարար, արժանավայրէ կերպով և պատվով կատարել իրենց պարութը։

Կարմիր Բանակն իր անպարտելի հզորությամբ և փառքով պարտական և Լենինին և Ստալինին։ Նըրանք ստեղծեցին Կարմիր Բանակը, վողեջնչեցին նըրան։

Ուսումնասիրելով Մարքսի և Ենդելսի աշխատությունները և անցյալ դարի զինված ապստամբությունների հարուստ փորձը, մանավանդ Փարէլի կոմունայի փորձը, Լենինը մեր կուսակցությանը սովորեցրեց զինված ապստամբության արվեստը։ Դրա հետ միասին Լենինը գտնում եր, զոր պոլետարիատի զինումը բոլցեկյան կուսակցության կարեռագույն ինդիրն ե։

1905 թվի Հեղափոխության առաջին իսկ որերից Լենինը մատնացույց արեց կուսակցությանը, վորանհաժեշտ և անհապաղ զինել պրոլետարիատին և առանձնացնել կուսակցական կաղրերի հայուկ խօսքեր՝ մարտական ջոկատները և նրանց զինումը ղեկավարելու համար։

Բոլցեկյան կուսակցության III համագումարը, վորը տեղի ունեցավ 1905 թվի ապրիլին, քննեց զինված ապստամբության հարցը։ Համագումարը հաստատեց Լենինի առաջարկած բանաձեւը, վորը պահանջում եր ամենայեռանդուն միջոցներ ձեռք առնել պրոլետարիատին զինելու համար, մշակել զինված ապստամբություն և այն անմիջականորեն ղեկավարելու պլանը։

Չնայելով ցարական դահլիճների դաժան հետապնդումներին, տաժանքի ու մահապատժի սպառնաշերին, բոլցեկյան արժանավայրել կերպով կատարում եյին Լենինի ցուցումները։ Պրոլետարական խոչորագույն կենտրոններում— Պետերբուրգում, Մոսկվայում, Անդրկովկասում և այլն,— բոլցեկյան ստեղծում եյին մարտական ջոկատներ, վորտեղ բանվորները սովորում եյին ուղղմական գործը։ Զոկատներում հրաձիգների, դնդացըլորդների, ոմբանետիչների, հետախույզների, կապավորների հասուկ խմբեր եյին առանձնացվում։

Այն չափով, ինչ չափով հասունանում եր զինված ապստամբությունը, հեղափոխական բանվորների նորանոր հարյուրյակներ ու հազարյակներ եյին մտնում մարտական ջոկատները։ Բայց ինչո՞վ զինել նրանց,— զենքերը պակասում եյին։ Դրանք ձեռք եյին բերվում մեծ դժվարություններով և գաղտանի փոխազովում փոքրիկ քանակությամբ։ Իսկ զինված ապստամբությունը հետաձգել այնքան, մինչև վոր բոլոր ջոկատներն ու գուգազները բավականաւչափ քանակով զենք ունենալին,— նշանակում եր վիճացնել զինված ապստամբությունը։

Լենինը ցույց տվեց յելքը։ 1905 թվի Հոկտեմբերի վերջին նա զրեց հատուկ մի նամակ— «Հեղափոխական բանակի ջոկատների ինդիրները»։ Լենինն այս նամակում մինչեւ ամենաչնչին մանրամասնությունները մշակում ե մարտական ջոկատների գործողությունների ձեռքն ու յեղանակները, հատուկ ուշադրություն գարձնելով այն հանգամանքի վրա, վոր ջոկատներն

իրենք պետք ե նախաձեռնություն և ինքնուրույնություն ցուցաբերեն զենք ձեռք բերելու դործում:

«Զոկատները, — զրում եր էնինը, — պետք ե իրենք զինվեն, ով ինչով կարող ե (հրացան, ստրձանակ, ոռմբ, դանակ, կաստետ, գավազան, նալթուլաթ՝ հրկիզման համար, պարան կամ պարանե սանդուղք, բարիկադներ, կառուցելու համար բահ, պիրուիլինի փամփամիներ, փշալար, մեխեր (հեճելագորի գեմ, և այլն և այլն): Վոչ մի գեղքում չըպետք ե ոգնություն սպասեն ուրիշ տեղից, վերեկց, դրսից, այլ ամեն ինչ իրենք պետք ե ձեռք բերեն»¹⁾:

Էնինն այնուհետեւ նշում եր, վոր բանվորական գուշագները, նույնիսկ զենք չունեցալուները, կարող են ապստամբությանը մեծ ողուտ բերել, քարկոծելով ցարական դրգերը, վերին հարկերից և կտուրներից յեռաջուր թափելով նրանց վրա, հարձակելով առանձին վոստիկանների և կազակների վրա, դրավելով նրանց զենքերը, փրկելով վիրավորվածներին կամ ձերբակալմածներին:

Էնինի կոչը բանվորների նախաձեռնության նրկատմամբ լայն արձագանք դառավ: Բանվորներն իրենք ոկտեցին զինվել զանազան միջոցներով: Գործարաններում նիզակներ ու դաշտայներ եյին շինում, ոռումբերի համար պարուտակներ եյին ձուլում, վորոնք լցնում եյին ինքնակործ «լարորատորիաներում», ոգտագործում եյին վորարդական հրացանները, իրենք եյին փամփուշոներ լցնում:

1) Лепин, Сочинения, т. VIII, стр. 327.

Մարտական ջոկատները, խմբերն ու զուգազները, վորոնք ստեղծվել եյին ոռուսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանում, հանդիսացան պրոլետարական հեղափոխության զինված ուժերի սաղմբ, նախատիպը: Երանցում դաստիարակվում ու կոփկում եյին աղաղաղական կարմիր բանակի բոլշևիկյան զեկավար կաղըրերը: Այնպիսի ականավոր պրոլետարական զորավարներ, ինչպես վորոշիլովը, Ֆրունզեն, Կիրովը, Կույբիշև և ուրիշ շատերը, երեսյ զինվորական գործունեցությունն սկսեցին ոռուսական առաջին հեղափոխության բանվորական ջոկատներում:

«Իմ զինվորական «կարյերան», — ասում ե ընկեր Վորոշիլովը, — սկսվեց նրանից, վոր յես 1906-1907 թվականներին Ֆինլանդիայից անլեզալ կերպով զինք եյի փոխադրում Դոնի ավաղանը և այնտեղ մեր ամբողջ կազմակերպության հետ միասին բոլշևիկյան ռազմական բանվորական գուղաղներ եյի կազմակերպում...»:

Ստեղծելով բանվորական ջոկատների զեկավարների կաղըրեր, կուսակցությունը չեր հրաժարվում բանվոր դասակարգին նվիրված զինվորական մասնակետներին ողտակործելուց: Էնինն ուղղակի մատնանշում եր, վոր անհրաժեշտ և սպաներին ու զինվորներին ներդրամիկ բանվորական ջոկատների սաղմական ուսուցման գործին: Էնինը կուսակցությանը սովորեցնում եր աշխատանք կատարել ցարական բանակում, զինվորներին և նախատիպներին նվաճել հեղափոխության կողմը:

Գնդերում և նավերում ստեղծվում եյին բոլշևիկների սաղմական կազմակերպություններ, վորոնք վոր-

քերի մեջ ապօտամբություններ ելին նախապատրաստում և զինվորներին ու նավաստիներին ներդրավում ելին հեղափոխական պայքարին :

Անինն անդադար հետեւում եր ցարական բանակում և նավատորմիդում կատարվող հեղափոխական աշխատանքի ընթացքին, նշելով զինվորների և նավատիների բոլոր նկատելի յելույթները : Նա հանձարեղ կերպով վորոշեց հեղափոխական զորքերի տեղն առըստամբության մեջ և նրանց դերը քաղաքացիական պատերազմում :

Անինը հսկայական նշանակություն եր տալիս հեղափոխության մեջ մասսաների ռազմական զեկարգաբարման : Նա կուսակցական կադրերին հաստատակամորեն առաջարկում եր ուսումնասիրել ռազմական դործը և այդ դործի հետ ծանոթացնել բանվորների լայն մասսաներին :

«Վերցրեք ռազմական դործը, — զբում եր Անինը, — վոչ մի սոցիալ-դեմոկրատ, վորը զեթ վորեե չափով ծանոթ և պատմության հետ, սովորել և այդ դործի մեծ վարպետ Ենդելսից, — յերբեք չի կասկածել ռազմական գիտելիքների հսկայական նշանակության նկատմամբ, այն հսկայական կարեորության նկատմամբ, վոր ունեն ռազմական տեխնիկան և ռազմական կազմակերպությունը, վորպես զենք, վորով ժողովրդի մասսաները և ժողովրդի զատակարգերն ուղարկում են պատմական մեծ բաղխումները վճռելու համար... Բայց իիմա բոլոր սոցիալ-դեմոկրատները ռազմական հարցերն առաջ քաշեցին յեթե վոչ առաջին տեղը, ապա առաջին տեղերից մեջ, հերթի դրին դրանց ուսումնասիրությունը և

պրանից հետո ժողովրդական մասսաներին ծանոթացնելը»¹⁾ :

Ուսումնասիրելով ռազմական դործը և կատարելով ռազմական մեծ աշխատանք, բուշեիկները բանվոր գասակարդի զինված ուժերի շինարարության, զինվորների և նավատիների մեջ աշխատելու, զինված ապօտամբությունը զեկավարելու ամենահարուստ փորձ կուտակեցին և այդ փորձը լայնորեն գործադրեցին հետագա պայքարում, վոր մզկում եր սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար :

1905-1907 թվականների հեղափոխությունից հետո Անինը ստիպված եր նորից մեկնել արտասահման : Շաբունակելով համառ պայքար մղել կուտակությունը պահպանելու և ամրապնդելու համար, նրա գաղափարական զենքի — մարքսիստական-Լենինյան թեորիայի անաղարտության համար, Անինը ժամանակ եր գտնում խորապես ուսումնասիրելու կառուցեցի և ռազմական պատմության ու ռազմական արվեստի թեորիայի մյուս ականավոր գրողների . աշխատությունները :

ԼԵՆԻՆԸ — ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Հենց վոր Անինը ստացավ առաջին լուրերն այն մասին, վոր սուս բանվորներն ու դյուղացիները տապալել են ցարական լինքնակալությունը, վոր մու-

1) Ленин, Сочинения, т. VII, стр. 384—385.

սաստանում բանվորական դեպուտատաների Խորհուրդունքը են ստեղծվել, բայց մենչեւների ու եսերների դավաճանության հետևանքով իշխանությունն ընկել է բուրժուազիայի ձեռքը, — լենինն անմիջապես բարեփեկներին գիրեկտիվներ և առլիս նոր պարմաններում կուսակցության տակտիկայի մասին։ Լենինը մասնանշում է, վոր հեղափոխության առաջին ետապն առվարտվել է, վոր բոլշևիկների հմտական խնդիրն է հանդիսանում զինված պատրաստությունը նոր ետապի՝ Խորհուրդների կողմից իշխանությունը նվաճելու համար։ Արտասահմանից ուղարկած մի ամբողջ շարք նամակներում Լենինը բազմիցս ընդդում է, վոր դեպի բարձրադրույն ետապը հաջողությամբ ընթանալու միակ յերաշխիքը հանդիսանում է բանվորների գինումը և բանակի նվաճումը բոլշևիկների կողմը։

Ընկեր Ստալինը, վոր վերջին աքսորից վերադարձել եր Պետրովը, կազմակերպեց բանվորների ինքնազինումը, բացառուելով նրանց, վոր անհրաժեշտ և ստեղծել կարմիր դվարդիա— զինված բանվորների այդ բանակը, վորը պետք է սերու կապված լիներ հեղափոխական շարժման կենարոնների հետ։

Հեղափարվելով լենինի և Ստալինի ցուցումներով, բոլշևիկյան կազմակերպությունները Պետրովը դործարաններում կարմիր դվարդիայի ջոկատներ ելին կազմակերպում, իսկ դորամասերում բոլշևիկյան ռազմական կազմակերպություններ ելին ստեղծում։

Յերե լենինը ժամանեց Պետրովը, բանվորները և հեղափոխական զինվորները ցնծությամբ գիմավորեցին նրան։ Ֆինլանդական կայարանի առջև գտնվող

Հրապարակում հավաքվեցին զինված չոկատները, վորոնց թվում կար 7 հազար զինվոր։ Պերոնում շարք կանգնեց բանվորներից, նավաստիներից և զինվորներից բաղկացած պատվավոր պահակախումբը։ Նրանք զինվորական մեծարանքով վողջունեցին պրոլետարական հեղափոխության մեծ ստրատեգին և առաջնորդին։

Բարձրանալով զրահապատի վրա, վոր կանդնած եր կայարանի առջև գտնվող հրապարակում, լենինը ուստի պրոլետարներին և զինվորներին չորհավորեց հեղափոխության հաղթանակը և աղդաբարեց այն լուգունգը, վորը մեր յերկը զարգացման նոր դարաշրջան բացեց։

«Կեցցե սոցիալիստական հեղափոխությունը»։

Սկսվում եր կուսակցության պայքարը՝ բուրժուական-ուժեմուլյատական հեղափոխությունից սոցիալիստական հեղափոխության անցնելու համար։ Իր ձառներում և հոգվածներում լենինը պահանջում եր մշտական բանակն ու վոստիկանությունը փոխարինել ժողովրդի ընդհանուր զինումով։

Ստալինն ակտիվորեն ոգնում է լենինին։ Կարճ ժամանակում Պետրովը կարմիր դվարդիայի թիվը հասնում է 10—12 հազար հոգու։ Բնկեր Ստալինի ցուցումով զործարանային զոկատները միավորվեցին ըստ ռայոնների, ստեղծվեցին կարմիր դվարդիայի ռայոնական շտարներ։ Պետրովը կարմիր դվարդիայի պահական կայարանի առջև ստեղծվում նաև մյուս քաղաքներում։

Բանվորները կարմիր դվարդիայի կազմակերպմանը վերաբերվեցին ինչպես իրենց խորապես հարա-

զատ գործին։ Նրանք անմիջական ժամանակություն
ելին ուսենում կարմիր գվարդիայի կոմունկտավոր-
ման, դիման, ուսուցման և նրա համար զեկավար
կաղըեր ընտրելուն։ Բանվորները մի առանձին պա-
տիվ ելին համարում կարմիր գվարդիայում գտնվե-
լը։ Նրանք բացառիկ զգաստությամբ հսկում ենին,
վորպեսզի պատահական և թշնամի տարրերը չողուա-
կեն կարմիր գվարդիայի շարքերը։

Պետերհոգի ույսնի բանվորներն իրենց գիմուռէ և եղ գրում եքին, վոր Կարմիր զվարդիան պետք է աղջկացած լինի ընտիր և հուսալի անձնավորությաւն- ուերից: Նրա մեջ պետք է մտնի բանվոր դասակար- դի լավագույն մասը: Մի քանի ջոկատներում ընդու- նում ելին միայն կուսակցական կամ արհեստակցա- կան կազմակերպության յերաշխավորությամբ: Պետ- ությունը ընդհանուր ժողովներում Կարմիր զվարդի բ- այում ծառայելու համար ընտրում ելին ամենասու- լուն բանվորներին, վորոնք ասլացուցել ելին իրենց նվիրվածությունը բանվոր դասակարդի գործին: Ա- նում ելին դեպքեր, յերբ բանվորները քաղաքական, բարոյական և այլ պատճառներով չելին ընդունում Կարմիր զվարդիայի մեջ այն թեկնածուներին, վո- րոնք առաջ ելին քաշվում ժողովներում: Կարմիր զվարդիայում ընդունելության նկատմամբ բանվոր- ների արդպիսի խիստ վերաբերմունքը բղխում եր այն նպատակներից, վոր բանվոր դասակարդը զնում եր իր գինված ուժերի առաջ: Իսկ այդ նպատակները ձևա- գերպված ելին Կարմիր զվարդիայի կանոնադրության մեջ, վորտեղ ասկած եր, թե Կարմիր զվարդիան պը- ըուլետարիատի զինված ուժերի կազմակերպությունն ե-

Հակառակության դեմ նա նախորոշվում է հակառակության պաշտպանությունում և հեղափոխության նվաճումները պաշտպանությունում համար :

Ուազմական կազմակերպությունները շրաբնակության մեջ անձամբ մասնակցում եր լնկեր Ստալինը: Երան անմիջական զեկովարությամբ բռուցելիկների Նրա անմիջական զաղացական հանձնաժողովը Պետրոպալովի կոմիտեյի ուազմական հանձնաժողովը Պերածվեց կուսակցության Կենտրոնական կոմիտեյին վերածվեց կուսակցության կազմակերպության: Ուազմական կազմակցության ստեղծվեցին ուազմաճակատում և մակերպություններ ստեղծվեցին ուազմաճակատում և մի շաբաթ կայազուներում (Մոսկվա, Խվանովո-Լոզովյան Հեռենուկ, Կիև, Խարկով, Ադեստա, Լուգանսկ այլն):

Այս աշխատանքի հետևանքով, վոր կատարեցին ռազմական կազմակերպությունները և բոլցելիքան մամուլը, զինվորական մասսաները համախմբվում ե-

յին բոլշևիկյան կուսակցության չուրջը, Անդինի չուրջը: Անդինին ուղարկված բազմաթիվ նամակներում նրանք արտահայտում եյին իրենց նվիրվածությունը հեղափոխության գործին:

«Ընկեր, սիրելի Անդին—գրում եյին զինվորներ— Հիշիր, վոր մենք... բոլորս, ինչպես մի մարդ, ուստարասու ենք զնալ քո հետեւից ամենուրեք և վոր քո իդեան իսկապես վոր զյուղացիների և քանվորների կամքի արտահայտությունն ե»:

Բանակում աշխատանքի հետակա ուժեղացման համար Անդինի առաջարկով Հրամիրվեց բոլշևիկների ճակատային և թիկունքային ուազմական կազմակերպությունների Համառուսական կոնֆերանս: Կոնֆերանսը կայացավ Պետրովյան պուտ, 1917 թվի հունիսին: Մասնակցում եր մոտ 160 պատգամավոր 48 ճակատային և 17 թիկունքային ուազմական կազմակերպություններից, վորոնք միավորում եյին մինչև 30 հազար բոլշևիկներ՝ չորս կարևորագույն ուղղաձականներում ու յերկրի յերեսուն խոչըրագույն կննորուններում գտնվող հինգ հարյուր զնդերում:

Անդինը և Ստալինն անմիջականորեն զեկուցարում եյին կոնֆերանսի աշխատանքը: Կոնֆերանսում Անդինը յերկու զեկուցում ավեց, վորոնը պատգամավորները լսեցին լարված աւշադրությամբ:

Ընթացիկ մոմենտի վերաբերյալ զեկուցման մեջ Անդինը սպասելէ կերպով անալիվի յենթարկեց դասակարգային ուժերի մոխո-հարաբերությունները և այն աեզարժարժերը, վոր կատարի ել եյին ուշադարձերը, վոր կատարի յերեսուն խոչըրագույն կննորուններում գտնվող հինգ հարյուր զնդերում:

Կապակցությամբ: Անդինը բանակային բոլշևիկներին կոչ եր անում լինել զբաստ և զվույշ, — հակածեղափոխության պրովոկացիայից խուսափելու համար, — և զինվորական մասսաների մեջ ավելի համար կազմակերպչական և քաղաքական աշխատանք կատարել:

Յերկրորդ զեկուցման մեջ, վոր վերաբերում եր ազգարային հարցին, Անդինը պարզաբանեց կուսակցության ապրելյան կոնֆերանսի վորոշումները և սպատղամավորներին առաջարկեց բացարձիլ զինվորներին այդ վորոշումների հիմնական բովանդակությունը — կալվածատիրական հողերի զբակում և դրանց անհավաղ հանձնում զյուղացիներին, առանց սպասելու հիմնադիր ժողովին:

Ընկեր Ստալինը զեկուցում ավեց ազգային շարժման և ազգային զնդերի մասին: Տալով պարզ զբարության տակտիկայի մասին, վոր կուսակցությունը պետք է կերպում ազգային շարժման ամի պայմաններում, — այն շարժման, վոր բուռն թափով ծավալվել եր ի պատասխան ժամանակավոր կառավարության իմպերիալիստական ազգային քաղաքականության, — ընկեր Ստալինը լիակատար պարզություն մտցրեց այն հարցում, թե ինչպես պետք է վերաբերվել գեղի ազգային զրական ուժերը (ուկրաինական զորքերը, լեհական կորպուսը): Կոնֆերանսն ընդունեց ընկեր Ստալինի առաջարկը — պայքարել ազգային գնդերը ժողովրդից կարված բանակի վերածվելու դեմ:

Կոնֆերանսն ընտրեց ուղղական կազմակերպության Համառուսական բյուրո, վորի կազմի մեջ մը-

տան լ. Մ. Կաղմանովիչը և ռազմական կազմակերպությունների մյուս դեկավարները:

Ռազմական կազմակերպությունները չեյին սահմանափակվում զինվորների մեջ աշխատելով: Կատարելով լենինի ցուցումները մասսաների ռազմական դեկավարության մասին, նրանք հրահանդիչներով, զենքով, ռազմամթերքով ողնում եյին Կարմիր գվարդիային: Ռազմական կազմակերպությունների ուղարկած հրահանդիչների (զինվորների և սպաների) ողնությամբ Կարմիր գվարդիայի ջոկատներում ռազմական պարապմունքներ եյին լինում: Բանվորները սովորում եյին կրակել հրացաններից և դնդացիրներից, նոնակներ նետել, սովորում եյին սապյորական և պայթեցման դորձը:

Կարմիր գվարդիայի և ռազմական կազմակերպությունների միջև յեղած սերտ կապը նոպաստում եր բանակում պրոլետարական ազգեցության աճման, ամրապնդում եր զինված բանվորների և հեղափոխական զորքերի միասնությունը, նրանց դարձնելով աշարկու ուժ ընդդեմ բուրժուա-կալվածատիրական հակահեղափոխության:

Հակահեղափոխական կառավարությունը և համաձայնական թափթփուկները չեյին կարող անտարբեր վերաբերվել դեպի այն, վոր բոլշևիկները պրոլետարական աճող հեղափոխության զինված ուժեր եյին ստեղծում: Համաձայնական թափթփուկները դիմում եյին ամեն տեսակ խորամանկությունների, վորպես զինաթափեյին Կարմիր գվարդիան:

Լենինը գրում եր.—«... Հակահեղափոխությունը յերբեք չի հանդուրժել, չեր կարող հանդուրժել,

չոր բանակի կողքին զինված բանվորներ լինելին... Զինված բանվորները նոր բանակի սաղմն ելին, որ հասարակական կարգերի կազմակերպչական ոջիջը: Ճղմել այդ թվին, թույլ չտալ, վոր նա աճի սահմանությունուաղիայի առաջին պատվիրանն եր...» (Հ. XXIII, Եջ 378):

Պետրոգրաֆում հուլիսի 3-5-ի ցույցը գնդակահարկելուց հետո Ժամանակավոր կառավարությունը հարձակվեց բոլշևիկյան կուսակցության, բանվորների, Կարմիր գվարդիայի վրա:

Կերենսկին քննմանով բուրժուազիայի առաջ՝ հուլիսի 12-ին հրաման տվեց սաոր և հրածիդ բոլոր զենքերն ու ռազմամթերքը հանձնելու մասին, սպառնալով դատաստան տեսնել հրամանը չկատարելու համար:

Դեպի խոչոր դուրծարանները, ուր Կարմիր գվարդիականները շատ զենք ունեյին, ուղարկվում եյին սպաներից ու յունկերներից բաղկացած պատժիչ ջոկատներ, վորոնք մասսայական խուզարկություններ և ձերբակալություններ եյին կատարում: Այսպես, ուրինակ, յունկերների և սպաների մի ջոկատ, մի քանի հարյուր կաղակներ և 6 զրահապատներ կապիտան Գվոզդիկի հրամանատարությամբ ժամանեցին Սեսուրբեցիու զինագործարանը: Գվոզդիկը սկահանջեց, վոր բանվորները 20 ժամվա ընթացքում հանձննեն զենքերը: Գործարանային բանվորական կազմակերպությունները, ցանկանալով խուսափել ընդհարումից, «յենթարկվեցին» սպայի պահանջին և «հանձնեցին»... հին բերդամները, կոտորքացանները, ջարդված սրերն ու այլ անպետք բաները, վորսնք

վերցված եյին գործարանային աղբակույտից : Բան-
վորները դեռ նախորդ որը մարտական հրացանները,
դնդացիլները, փամփուշաները, նոնակները տարել ե-
յին անտառ և այնտեղ թաղցրել այդ բոլորը :

Հակահեղափոխական բուրժուազիան նաև ձըղ-
տում եր Պետրովգրադը և սրոլետարական մյուս կէնտ-
րոնները մաքրել հեղափոխական գորքերից : Այդ ար-
դում եր գորամասեցը ուղղաճակատ ուղարկելու
ուստրփակով : 1917 թիվ Հուլիսի 10-ից մինչև ողու-
սոսի 22-ը միայն Պետրովգրադից ուղրաճակատ ու-
ղարկեց հեղափոխականորեն տրամադրված ավելի
քան 50 հազար զինվոր :

Սակայն հալածանքները չընկեցին բանվոր դա-
սակարիլ պայքարելու կամքը : Հուլիսյան որերից հե-
տո անշեղորեն աճում եր բոլչեկիլյան կուսակցության
աղեցությունը մասսաների վրա : Դրա ապացույցն
այն է, վոր բանվորներն ու զինվորները մասսանե-
րով գուրս եյին դալիս մենշևիկների և եսէրների
կուսակցություններից և համախմբվում եյին բոլչեկի-
ների կուսակցության շուրջը :

Հալածանքի և ընդհատակի պայմաններում բոլչե-
կիների կուսակցությունը մասսաներին պատրաստում
եր մոտալուս ճակատամարտերին : Այդ նախալատ-
րաստության կարևորագույն մոմենտն եր կուսակ-
ցության VI համակումարը, վորը նշեց ընթացքը
գեպի զինված ապստամբություն :

Լենինը չեր կարող անձամբ լինել համագումա-
րում, վրովհետեւ հակահեղափոխության գործակալ-
ները հետապնդում եյին նրան : Բայց նա ընդհատա-
կեց, եր զինակիցներ Ստալինի, Սվերդլովի, Մոլո-

տովի, Արջոնիկիձեյի միջոցով զեկավարում եր հա-
մագումարը : Կուսակցության VI համագումարի բոլոր
վորոշումների նպատակն եր պրոլետարիատին և չքա-
վոր դյուղացիությանը նախապատրաստել զինված
ապստամբության :

Համագումարը բաց թողեց մի մանիֆեստ, վորով
բանվորներին, զինվորներին և գյուղացիներին կոչ
եր անում կուտակել և պատրաստել ուժերը՝ վճա-
կան մարտերի համար : Բանվորները բնակարաննե-
րում, ձորակներում զաղտնի կերպով, եւ ավելի յե-
ռանդով եյին զբաղվում ուղմական ուսուցմամբ, կո-
չեկտիվ վորոշություններ եյին կազմակերպում, սովորում
եյին նոնակներ նետել :

Կառնիլովյան դավադրության որերում, յերբ
բոլչեկիյան կուսակցության կենտկոմը բանվորներին
և զինվորներին կոչ արեց զինված հակահարված տալ
հակահեղափոխության, Կարմիր դվարդիան ուուրս
յեկավ իր հարկադրական ընդհատակից : Բանվորները
հազարներով մտնում եյին Կարմիր դվարդիայի ջո-
կատները, զինվոր եյին կառնիլովչչինայի դեմ վըճ-
ռական պայքար մղելու համար : Պիտերի պրոլետար-
ներից հետո վոտքի եյին յելնում մյուս քաղաքների
բանվորները :

Այսպես, չիսսելբուրդյան բանվորները Պետրոգրա-
դին ողնելու համար ուղարկեցին 600 հոգուց քաղկա-
ցած մի ջոկատ և մի ամբողջ նավ ուղմամթերք :

Բանվորների հետ ձեռք ձեռքի տված գնում եյին
նաև հեղափոխական զորքերը : Բոլչեկիները մար-

աւական պատրաստության եյէն բերում Պետրովը աղի կայագորի գնդերը։ Մոտ 5 հազար զինված բալթյան նավաստիներ ժամանեցին Պետրովը աղաջանելու։

Լենինի-Ստալինի կուսակցությունը պրոլետարիատի զինված ուժերը հանեց հակածեղափոխության դեմ և կառնիլովչչինան ջախջախվեց։

Պրոլետարիատի մարտական ուժերը մարտական պատրաստության բերելը և կառնիլովչչինայի հաջող ջախջախումը հանդիսացան մի տեսակ փորձ, կտակի տալիզմի դեմ զիխավոր ճակատամարտը մղելու համար։

Այդ ճակատամարտը վորքան կարելի յե լավ, վորքան կարելի յե կազմակերպված ու վճռականորեն մղելու համար, իսկական ու լիակատար հաղթանակ տանելու համար, Լենինը Կենտրոնական կոմիտեյին և բոլշևիկյան կազմակերպություններին ուղղված նամակներում պահանջում եր զինված ապստամբությանը վերաբերվել ինչպես արվեստին և մշակեց ապստամբության կանոններն ու որենքները։

Պրոլետարական հեղափոխության հանճարեղ ստրատեգ Լենինը տվեց ապստամբության կոնկրետ պլանը, մատոնանչելով, թե ինչպես պետք ե դաստիպրել զինված ուժերը, ինչպես և վորտեղից հացնել վճռական հարվածը, առաջին հերթին վոր կետերը դրավել։

Զարգացնելով Մարքսի և Յնդելսի ուսմունքը զինված ապստամբության մասին, Լենինը գրում եր.

«Կիրառելով Ռուսաստանի և 1917 թվի հոկտեմբերի վերաբերմամբ այդ նշանակում ե՝ միաժամանակ, հնարավորին չափ ավելի հանկարծակի և արագ հար-

ձակում Պիտերի վրա, անպայման և գրուից և ներ-սից, և՝ բանվորական թաղերից, և՝ ֆինլանդիայից, և Ռեվլիից, Կրոնշտադտից, ամբողջ նավատորմիդի հարձակումը, ուժերի հակայական զերակշռության մեր «բուրժուական դվարդիայի» (յուն-կուտակումը մեր «բուրժուական դվարդիայի» (կաղակների կերների), մեր «վանդեյական զորքերի» (կաղակների մի մասը) և այլն 15-20 հազարի (գուցե և ավելի) վերաբերմամբ։

Համակցել մեր յերեք դիմավոր ուժերը՝ նա-վատորմիդը, բանվորներին և դրամատերն այնպես, վոր անպայման գրավեն և ինչպիսի կորուստների վոր անպայման գրավեն՝ ա) հեռախոսը, գնով ել լինի մեր ձեռքում պահվեն՝ ա) հեռախոսը, բ) հեռադիրը, դ) յերկաթուղու կայարանները. դ) կամուրջներն առաջին հերթին։

Այժմից ավելի վճռական տարրերն (մեր «հարդա-ծայիններին» և բանվորական յերիտասարդությանը, ինչպես նաև լավագույն նավաստիններին) առանձնաց-նել կազմելով փոքրիկ զոկատներ, վորպեսզի նրանք գրավեն բոլոր կարևորագույն կետերը և վորպեսզի գրավեն բոլոր կարևորագույն կետերը և վորպեսզի բանակցեն ամենուրեք, բոլոր կարևոր ուղե-րացիաներում, որինակ։

Շրջապատել և կտրել Պիտերը, վերցնել այն նա-վատորմիդի բանվորների և զորքերի համակցված գրուուլ, — ահա այս և արվեստ և յեռակի համարձա-կուրյուն պահանջող խողիբերը։

Այժմաւագագույն բանվորներից ջոկատներ կաղ-մել հրացաններով ու ոռոմբերով՝ թշնամու «կենտ-րոնների» (յունկերական դպրոցները, հեռադիրն ու հեռախոսը և այլն) վրա հարձակվելու և նրանք վրջապատելու համար հետևյալ լողունդով. քող վր-

չընչաման բոլորը, բայց թշնամուն քույլ չտալ անցնելու¹⁾:

1917 թվի հոկտեմբերի 7-ին նորից ժամանելով
Պետրոգրադ, Լենինն ամենից առաջ հանդիպեց Ստա-
լինին, վորի հետ քննարկեց զրությունը և ապստամ-
բության պլանը: Լենինն իր մտած եր կանչում նաև
մյուս դեկադար աշխատողներին, ստուգում եր Կար-
միր գվարդիայի և Պետրոգրադի կայազորի հեղափո-
խական գրամֆոների մարտական սպառքաստությու-
նը, հայտաբերում եր զինված ապստամբությանը
Բալթյան նավատորմիդի մասնակցության առավելա-
գույն հնարավորությունները:

Հոկտեմբերի 10-ի իր պատմական նիստում կենտ-
կոմը Լենինի գեկուցման առթիվ վորոշում ընդունեց
զինված ապստամբությունն սկսել ամենամուտ որե-
րում: Հոկտեմբերի 12-ին, կուսակցության կենտրոնի
ցուցումով՝ Պետրոգրադի Խորհրդին կից ստեղծվեց
Թագմա-հեղափոխական կոմիտե (ԾՀԿ), վորը դար-
ձավ ապստամբության լեզար շտաբ: ԾՀԿ դեկադա-
րությունը հանձնարարվեց կուսակցական կենտրոնին
ընկեր Ստալինի գլխավորությամբ, վորն ընտրվեց
կենտրոնի նիստում, Հոկտեմբերի 16-ին: Մինչև
ապստամբության սկիզբը մի քանի որ եր մնում:

Այդ լարված մոմենտում զինված ապստամբու-
թյան դոզծին հսկայական վնաս հասցրին հեղափո-
խության մատնիչներն ու դավաճանները — Կամեները,
Զինովյեվը և Տրոցկին: Ապստամբության մասին
կուսակցության կազմած պլանները նրանք մատնեցին

1) Ленин, Сочинения, т. XXI, стр. 320.

հակահեղափոխական ժամանակավոր կառավարության
մենշևիկյան մամուլում հրապարակելով կուսակցական
դադունիքը:

Սակայն նրանց չհաջողվեց կանգնեցնել հեղա-
փոխության ընթացքը: Լենինի դիրքեկտիվները և կու-
սակցության վորոշումներն անշեղոսեն կենսագործ-
վում եին: Կարմիր գվարդիան մարտական պատրաս-
տության բերեց իր ջոկատները, վորոնց մեջ հոկ-
տեմբերին արդեն կար ավելի քան 20 հազար հոգի:
Ռէզի մոտ 600 կոմիսարներ ուղարկեց զորամասները,
նավերը, զինապահեատները: Հենվելով ուղմական
կազմակերպությունների և գնդերի կոմիտեների վրա,
կոմիսարները ստուգում կատարելուց հետո հրամ-
կազմ ընտրեցին, զորամասները լիակատար մարտական
պատրաստության բերին:

Բոլշևիկյան կուսակցությունն այսպիսով Լենինի
առաջնորդությամբ պրոլետարիատը զինված ուժերը
նախապատրաստեց Հոկտեմբերյան զրոհին: Այն ժա-
մանակ կուսակցության արամազդրության տակ ելին
դտնվում նշանակալից զինված ուժեր, — Կարմիր գր-
վարդիայի ջոկատները, մի քանի հին գնդեր և ա-
ռանձին զորամասներ, վորոնց մեջ պրոպագանդ եր
մզկած, և բացի այդ, Բալթյան նավատօրմիդի նա-
վասահների գրեթե ամբողջ մասսան:

Ապստամբության ընթացքում մարտական ուժե-
րի ոպերատիվ դեկադարման համար Լենինի ցուցու-
մով ստեղծվեցին հետեւյալ շտաբները: գլխավոր ըշ-
տարը — Սմոլնիում, ուր գտնվում ելին Լենինն ու
Ստալինը, ճակատային շտաբներ — «Եվրորա» հածա-
նավում և Պետրոպավլովսկի բերդում:

Ավարտելով նախապատրաստական բոլոր ձեռնարկումները, Լենինի-Ստալինի կուսակցությունը պըստարական հեղափոխության զինված ուժերը տարավ հարձակման: Յունկերների և սպաների գեմքած կուվներում հեղափոխական զորքերը հոկտեմբերի 24-ին և 25-ին դրավեցին կայարանները, կամուրջները, հեռաղբատունը, հեռախոսակայանը, կառավարական հիմնարկությունները, իսկ հոկտեմբերի 25-ից լույս 26-ի դիշերը լենինի կարգադրությամբ նրանք դրոհելով վերցրին բուրժուական իշխանության վերջին հենարանը— Զմեռային պալատը, և ձերբակալեցին ֆամանակավոր կառավարությունը:

Զինված ապստամբությունը, վոր կազմակերպելով դեկավարում եր Լենինի-Ստալինի կուսակցությունը, հաղթանակեց: Մկավեց մի նոր ժամանակաշրջան—սոցիալիստական հեղափոխության ժամանակաշրջանը:

Խորհուրդների Համառուսական II համագումարը, վորը նիստեր եր ունենում Հոկտեմբերյան ապստամբության պրեզին, հոչակեց ամբողջ յերկրում վողջ իշխանության անցումը Խորհուրդներին: Համագումարն ընտրեց Ժողովրդական կոմիսարների խորհուրդ— աշխարհում պրոլետարական դիկտուրայի առաջին պետության առաջին Բանդորա-Գյուղացիական կառավարությունը: Լենինն ընտրվեց Ժողոմի խորհի նախագահ:

Իր գոյության առաջին իսկ որերին խորհրդային իշխանությանը վիճակվեց ջախջախել բաղմաթիվ հակահեղափոխական յելույթները, վոր կազմակերպում ելին ցարական նախկին գեներալներն եսերները և մենշեների հետ միասին:

Կորմիր գվարդիայի և հեղափոխական զինվորների ու նավաստիների ջոկատների ուժերով համեմատություր այդ բոլոր յելույթները հեշտ և արագ կերպով բար այդ բոլոր յելույթները հաղթանակեց Խորհուրդների իշխամբողջ յերկրում հաղթանակամիջոցում դրեթե ջախջախեցին: Կարճ ժամանակամիջոցում դրեթե ամբողջ յերկրում հաղթանակեց Խորհուրդների իշխանությունը: Լենինն այդ ժամանակաշրջանն անվանեց խորհրդային իշխանության հաղթական, տրիումֆալ յերթի ժամանակաշրջան:

Վերը ուժելով պրոլետարական դիկտուրայի այդպիսի, համեմատաբար հեշտ հաղթանակի պատճառները, Լենինը մատնանշում եր, վոր աշխատավորների թշնամիները յերկրում չունեցին վոչ քաղաքական, վոչ ել տնտեսական հենարան:

Յերկրի ներսում հենարանից զուրկ լինելով, նրանք դիմեցին ոտարերկրյա բուրժուազիայի ողնության: Բայց այդ բուրժուազիան ել չեր կարող անհապաղ աշխակցություն ցույց տալ, վորովհետեւ շարունակում եր մզել իմպերիալիստական արյունոտ պատերազմը:

Այսպիսով, Ռուսաստանի հակահեղափոխությունը սկզբում զուրկ յեղակ թե ներքին և թե արտաքին ողնությունից: Ահա թե ինչու նրան հեշտությամբ հաղթեցին Կարմիր գվարդիականների փոքրիկ ջոկատները և հեղափոխական զինվորների ու նավաստիների խմբերը, վորոնք ցրված ելին ամբողջ յերկրում:

ԵԵՆԻՆԸ—ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ
ԲԱՆԱԿԻ ՀԱՆՁԱՐԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՅԵՎ ՆՐԱ
ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՎՈԳԵՇՆՉՈՂ

Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության հաղթա-
նակից հետո Լենինը՝ մատնանշում եր, վոր շահա-
դործողների առաջարկած դասակարգերը չեն հաշտվի
իրենց պարտության հետ, վոր նրանք ոտարերկրյա-
խմակերիալիստների հետ զաշնակցած՝ կհարձակվին
խորհրդային իշխանության վրա, կփորձեն վոչնչաց-
նել պրոլետարական դիկտատորան և վերականգնել
իրենց տիբառեատությունը։ Լենինը նախատեսում եր,
վոր անխուսափելի յե ընդհարումը միջադպային խմ-
պերիալիզմի հետ, վորը կուղավի առաջին խել հնա-
րավորությունից, վորպեսզի իր գորքերը նետի մեր
հայրենիքի դեմ։

Այն մոմենտում հեղափոխության ամենավտան-
գալոր թշնամին ոտարերկրյա խմակերիալիզմն եր։
Գերմանիայի կառավարող շրջաններում գտնում եյին
վոր Արևմայան ճակատում (Ֆրանսիայի, Անգլիայի
և այլոց դեմ) հաջողություն ունենալու համար ան-
հրաժեշտ և անհապաղ ինտերվենցիա սկսել Խորհրդա-
դպային Ռուսաստանի դեմ և տապալելով խորհրդա-
յին իշխանությունը, մեր յերկիրը դարձնել իրենց
գաղութը, ստրկացնել խորհրդային ժողովութղը,
խեղդել Ռուսաստանում սկսված համաշխարհային սո-
ցիստիստական հեղափոխությունը։

Ոտարերկրյա ինտերվենտները մեծ դժվարու-
թյուններ չեր տեսնում ինտերվենցիան իրականացնե-

լու մեջ։ Ոտարերկրյա դեներալները գեռ իրենց ձեռ-
քում ամուր պահում եյին բանակը և առանց հատուկ
ջանքերի կարող եյին նրան ստիպել հարձակվել Խոր-
հրդային Ռուսաստանի վրա։ Յարական հին բանակը,
վոր քայլքայման, հողնածության և կազմալուծման
ծայրահեղ աստիճանին եր հատել, անընդունակ եր
դիմադրության։ Սոյիալիստական հեղափոխությունը
հին բանակով պաշտպանելու մասին խոսք ել չեր կա-
րող լինել։ Մարքսը, Ենգելը, Լենինը, Ստալինը
բազմիցս ընդդում եյին, վոր հաղթական հեղափո-
խության առաջին պատվիրանն եր ջարդել հին բա-
նակը, — բուրժուատ-կալվածատիրական ոլետական
ապարատի այդ զենքը, արձակել այդ բանակը և նը-
րան փոխարինել նոր բանակով — պրոլետարական
պետության բանակով։

«... Հասարակական նոր դասակարգը, — ասում
եր Լենինը, — բարձրանալով զեկի տիբառպետությու-
նը, յերբեք չեր կարող և հիմա չի կարող այդ տիբա-
ռպետության համեմ և այն ամբողջելով այլ կերպ,
քան բոլորովին քայլքայելով հին բանակը... այլ
կերպ, քան անցնելով ամենաղժվար, ամենատանջա-
լից ժամանակաշրջանն առանց վորեւ բանակի... այլ
կերպ, քան քայլքացիական ծանր պատերազմում
աստիճանաբար մշակելով նոր բանակ, նոր կարգա-
պահություն, նոր դասակարգի նոր ռազմական կալ-
մակերպություն...» (Տ. XXIII, Էջ 379)։ Հին բանա-
կը քայլքայման պրոցես եր ապրում։ Հողնած, քաղ-
ցած, դըլտված զինվորները թողնում եյին իրենց
համար ձանձրալի իրամատները և խումբ-խումբ դը-
նում եյին իրենց տները։

«... Բանակ չկա, — ասում եր Լենինը, — նրան
պահելը հնարավոր չե: Ամենից լավը, վոր կարելիք
յե անել, — այդ այն ե, վոր շտափով զորացրենք նը-
րան... Այդ՝ ոռուսական պետական որդանիզմի հի-
վանդ մասն ե, վորը չի կարող այլես առնել այս
պատերազմի ծանրությունը: Վորքան շուտ մենք նրան
զորացրենք... այնքան յերկիրն ավելի շուտ կարող
ե պատրաստ լինել նոր, ծանր փորձությունների հա-
մար...»¹⁾

Պարզ ե, վոր այդպիսի բանակը չեր կարող հետ-
մղել գերմանական իմակերիալիստների դրուց:

Կարմիր զվարդիան նույնպես չեր կարող ամբող-
ջովին ոդտագործվել արտաքին թշնամիների դեմ
պայքարելու համար: Նա զբաղված եր ներքին հա-
կահեղափոխության դեմ պայքարելով: Բացի զբա-
նից, նա ներկայացնում եր մասնատված, թույլ սո-
վորեցրած և վատ զինված տեղական ջոկատների մաս-
ում, — վորոնք համապետական մասշտաբով միավոր-
ված չելին:

Մեր հայրենիքի համար ծանր այդ դրությունից
յելքը ցույց տվեց Լենինը: Նա առաջարկեց շտափ
ստեղծել մի նոր, Բանվորա-Գյուղացիական Կարմիր
Բանակ, — վորն ընդունակ լիներ հետ մղել ոտար-
երկրյա իմպերիալիստների դրուց, — և անհապաղ
հաշտություն կնքել: Հաշտություն կնքելը, դոնե մի
քանի ամսվա դադարը ծայրահեղորեն անհրաժեշտ եր
սոցիալիստական հեղափոխության նվաճումներն ամ-

լաղնդելու համար, «ուստի բուրժուազիային վերջնա-
կանապիս խեղիելու և Բուստանանը սոցիալիստա-
կանորեն վերակազմակերպելու համար»:

Խորհրդային կառավարությունը, ցանկանալով
խուսափել զերժանական զորքերի ներխուժելուց մեր
տերիտորիան, հաշտության բանակցություններ ըս-
կաց Գերմանիայի հետ և քանիցս դիմում եր պատե-
րազմող բոլոր պետություններին, առաջարկելով
մասնակցել հաշտության բանակցություններին:

Ոտարերկրյա իմպերիալիստները, ոգտվելով այն
հանգամանքից, վոր կապիտալիստական պետություն-
ները հրաժարվում են բանակցություններին մասնակ-
ցելուց, ողտվելով նաև Հուդա-Տրոցկու (վորն այն
ժամանակ մտնում եր բանակցություններ վարող խոր-
հրդային պատգամավորության կազմի մեջ) դավա-
ճանությունից, պահանջեցին միլիարդներով կոնտրի-
բուցիա և ամբողջ մարդեր, սպառնալով հարձակման
անցնել այդ պայմանները չընդունելու դեպքում:

Անհրաժեշտ եր շտափեցնել կարմիր Բանակի ըս-
տեղծումը: 1917 թվի դեկտեմբերի 20-ին Ժողկոմ-
իորհը Լենինի նախագահությամբ կազմեց Կարմիր
Բանակի կազմակերպման և ձեռվորման Համառուսա-
կան կոլեգիա: Միենույն ժամանակ Լենինի ցուցու-
մով ստեղծվում է Մոսկվայի առաջին Հեղափոխա-
կան դպրոցը, Կարմիր Բանակի հրամկադմ պատրաս-
տելու համար: Իսկ 1918 թվի հունվարի 28-ին Լենի-
նի ստորագրությամբ հրատարակվեց դեկրետ Բան-
ակորա-Գյուղացիական Կարմիր Բանակ ստեղծելու մա-
սին:

1) Լենին, Յերկեր, հ. XXII, էջ 412—413 Պետհրատ 1932 թ.
Եերեվան.

Կարմիր Բանակի նման մի այլ բանակ դեռ յերբեք չեր յեղեւ մարդկության պատմության մեջ։ Լենինն ասում է, վոր Կարմիր Բանակ ստեղծելու հարցն այն ժամանակ բալորովին նոր եր, առաջ այն նույնիսկ թերետիկ կերպով ել չեր դրվում։

Յենելով պրալետարական հեղափոխության դինամիզմ ուժերի շինարարության վորձից, Լենինը գեղեցիկում նշեց Կարմիր Բանակի ստեղծման հիմնական սկզբունքները։ Դեկտեմբերի ընդդում եր, վոր ի տարբերություն հին բանակից, վորը ծառայում եր իրեն բուրժուալիստից կողմից աշխատավորների գասակարգային ճնշման զորձիք, Կարմիր Բանակը «կհանդիսանա խորհրդային իշխանության հենարանը ներկայում, մշտական բանակը համաժողովրդական զինուժով վոխարինելու Փունդամետ ամենամուտ տպադայում և կծառայի իրեն ոժանդակություն Յեվրոպայում գլուխ սոցիալիստական հեղափոխության համար»։

Այսպիսով՝ Կարմիր Բանակի հեղափոխական, ինտերնացիոնալ բնույթը նրա ստեղծման սառաջին սկզբունքն է։ Յերկրորդ սկզբունքն է նրա դասակարգային բնույթը։

«Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը, — ասված եր դեկրետում, — ստեղծվում է աշխատավոր դասակարգերի ամենազիտակից և կազմակերպված տարրերից»։ Այդ յերկու սկզբունքները բղխում եյին Առաջարդային իշխանության հենց բնույթից։ Իսկ յերրորդ սկզբունքը՝ Կարմիր Բանակի կոմպլեկտավորման կամավոր բնույթը՝ պայմանավորվում եր այն իրադրությամբ, վորի մեջ նա ստեղծվում եր, —

քայլայլով բանակի առկայությամբ, Կարմիր Բանակի ապարատի բացակայությամբ։


Իր գոյության առաջին խոկ որերին Կարմիր Բանակն ընդհարվեց իմպերիալիստական ամենակատաղի գիշատչի հետ։

Ողտվելով տրոցկիստական—բուխարինական վոչմակի դավաճանությունից և պրովոկացիոն մեքենայություններից, իմպերիալիստները 1918 թվի փետրվարի 18-ին մոտ 300 հազար զորքով հարձակման ընցան։

Հին, քայլայլած բանակի կողմից դիմադրության չանդիպելով, ոտարերկրյա բանակները զավթում ենին մեր քաղաքներն ու գյուղերը, որանց հսկայական հարստությունները, ինչպես նաև այն ռազմական գույքը, վոր գտնվում եր ճակատամերձ դոտում։

Ներխուժելով մեր յերկիրը և նպատակ ունենալով տապալել պրոլետարիատի դիկտատուրան և Խորհրդային Ռուսաստանը դարձնել իրենց գաղութը, ոտարերկրյա ոկուպանաներ, չնայելով, վոր Լենինը հեռազբով համաձայնություն եր հայտնել հաշուություն կնքելու մասին, շարժվեցին դեսի Պետրոգրադ — Խորհրդային պետության այն ժամանակվա մայրաքաղաքը։

Հարկավոր յեղավ հերոսական ջանքեր թափել սանձարձակ թշնամուն կանգնեցնելու և վոնդելու համար։ Բոլոր թշնամու տպեցին լինինյան զեկրետը՝ սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու մասին։ Դեկրետում Լենինը սոցիալիստական հայրենիքը



հայտարարում եր վլտանդի մեջ և նշում եր նրա
պաշտպանության կարեռագույն ձեռնարկումները:

«1) Յերկրի բոլոր ուժերն ու միջոցներն ամբող-
ջովին տրամադրվում են հեղափոխական պաշտպանու-
թյան գործին:

2) Բոլոր խորհուրդները և հեղափոխական կաղ-
մակերպությունները պարտավոր են մինչև արյան
վերջին կաթիլը պաշտպանել յուրաքանչյուր դիրք:

3) Յերկաթուղային կազմակերպությունները և
նրանց հետ կապված խորհուրդները պարտավոր են
բոլոր ուժերով թույլ չտալ թշնամուն ոգտվելու հա-
ղորդակցության ճանապարհների ապարատից. նա-
հանջելիս վոչնչացնել ճանապարհները, պայթեցնել և
վառել յերկաթուղային շենքերը. յերթևեկության
ամրող կազմը—վագոններն ու շոգեքարշերն—անհա-
պաղ ուղարկել դեպի արևելք, յերկրի խորքը:

4) Հացի և առասարակ պարենի բոլոր պաշտո-
ները, ինչպես և ամեն մի արժեքավոր գույք, վո-
րոնց թշնամու ձեռքն ընկնելու վտանդ և սպառնում,
պետք ե անպայման յենթարկվեն վոչնչացման. դրա
հակողությունը հանձնարարվում է տեղական խոր-
հուրդներին, նրանց նախադահների անձնական պա-
տասխանատվությամբ:

5) Պետրոգրադի, Կիևի, բոլոր քաղաքների,
գյուղաքաղաքների, ավանների և դյուցերի բանվորնե-
րըն ու գյուղացիները նոր ուղմաճակատի գծում պետք
ե գումարտակներ զորահավաքեն, ուազմական մասնա-
գետների ղեկավառությամբ խրամատներ փորելու
համար:

6) Այդ գումարտակների մեջ պետք ե մտնեն

բուրժուական դասակարգի բոլոր աշխատունակ ան-
դամները՝ տղամարդկան կանայք կարմիր դվարդիա-
կանների հսկողության տակ. դիմադրողներին գըն-
դակահարել:

7) Այն բոլոր հրատարակությունները, վորոնք
դիմադրում են հեղափոխական պաշտպանության
գործին և անցնում գերմանական բուրժուազիայի կող-
մը, ինչպես նաև ձգտում են խորհրդային իշխանու-
թյունը տապալելու նպատակով ոգտագործել իմպե-
րիալիստական բանակների արշավանքը, — փակվում
են. այդ հրատարակությունների աշխատունակ իրմ-
բաղիրներն ու աշխատակիցները մորթվելուցիայի յեն
յենթարկվում խրամատներ փորելու և այլ պաշտպա-
նողական աշխատանքների համար:

8) Թշնամու գործակալները, սպեկուլյանտները,
կողոպտիչները, խուլիզանները, հեղահեղափոխական-
աղիտատորները, գերմանական լրտեսները դնդակա-
հարվում են հանցանքի տեղում:

Սոցիալիստական հայրենիքը վտանգի մեջ ե...»
Լենինի անձնական ղեկավարությամբ, Ստալինի
ամենամոտիկ մասնակցությամբ Սմոլիում ստեղծ-
վեց Պետրոգրադի պաշտպանության շտաբ: Ինչպես
և Մեծ Հոկտեմբերի պատմական որերին, դեպի Սմոլին
ելին գնում բանվորական ղինված ջոկատները, նա-
վասիները, հեղափոխական զորամասերը:

Բանվորները, կարմիր գվարդիականները հազար-
ներով մտնում եյին կարմիր Բանակ:

Պետրոգրադյան ռայոնում փետրվարին ցուցակա-
գրվեց 2470 հոդի: Առաջին քաղաքային ռայոնում—
1425 հոդի: Նարվայի ռայոնում միայն «Սկորոխող»

գործարանը տվեց 5400 կամավոր։ Զեկար վոչ մի ռայոն, վորը կարմիր Բանակի ջոկատներ չկաղմակերպեր։

Քաղաքամերձ ռայոններից — Պետերէնֆից, Սեստրորեցկից, Որանիեն բառումից, Կոլպէնոյից և այլ տեղերից կարմիր գվարդիայի ջոկատները դալիս ենին հեղափոխական մայրաքաղաքը պաշտպանելու։

Հեղափոխական բալթիկցիները հետ չեյին մնում Պիտերի պրոլետարներից, վորոնց հետ միասին Հոկտեմբերյան որերին նվաճում եյին խորհրդային իշխանությունը։ Նավերի անձնակազմերը պատրաստվեցին կույի։ «Ռեսպուբլիկա» գծանավի մարտիկներն անձնակազմի միտինգում վորոշեցին։

«Անմիջապես դադարեցնել առանց բացառության բոլորին զորացրելը և արձակուրդ տալը։

Կանչել արդեն մեկնածներին։

Ամենակարձ ժամանակամիջոցում ամեն ինչ մարտական պատրաստության բերել, սահմանել հեղափոխական խիստ կարդապահություն։

Բոլորը պետք ե հրացան վերցնեն։

Բոլորը պետք ե լինեն հեղափոխության կարմիր դրոշի տակ։

Կեցցե՛ համաշխարհային պայքարը բուրժուազիայի դեմ։

Նրան ինայել չկա։ Ով հիմա մեղ հետ չե, նամեր դեմ ե։

Բանվորների և նավաստիների հետ միասին լինինի կոչով վոտքի յելան նաև ճակատամերձ գոտու գյուղացիները։ Պոկոյի ռայոնում կարմիր Բանակի առաջին գնդերի հետ միասին Յ հազար գյուղացիներ

եյին կովում։ Կարմիր Բանակի ջոկատներ եյին կաղմակերպվում յերկրի մյուս ռայոններում ևս, — Ուրալում, Դոնբասում, Մեկնելով ռազմաճակատ, կարմիր բանակային ջոկատները յերդում եյին տալիս հետ մղել իմպերիալիստների հարձակումը և պաշտպանել խորհրդայինիքը։

Այդ առաջին ջոկատները և Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակի գնդերն արժանավայել կերպով կատարեցին իրենց յերդումը և հերոսաբար հետ մըղեցին ոտարերկրյա զորքերի հարձակումը։ Նարվայի և Պոկովի մոտ տեղի ունեցած մարտերում 1918 թվի փետրվարի 23-ին ջախջախիչ հարված տրվեց ոկուպանտներին։ Յերիտասարդ կարմիր Բանակը կանդնեցրեց նրանց հարձակումը Պիտերի վրա և վնալեց ոտարերկրյա ոկուպանտներին, վորոնք մեծ կորուստներ կրեցին։

Այսպես, Լենինի-Ստալինի կուսակցության դրոշի տակ, համառ, անհավասար մարտերում ծնվեց Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակը և նրա մարտական զինակիցը՝ Ռազմա-Ծովային նավատորմիդը։

Այն որը, յերբ ջախջախիչ հարված տրվեց ոտարերկրյա ոկուպանտներին, դարձավ կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային նավատորմիդի հոբելյանի որ։

Վճռական հակահարվածը, վոր ստացավ ոտարերկրյա զինվորականությունը, այնուամենայնիվ յերաշխիք չեր տալիս, վոր նա նոր հարձակումներ չի գործի խորհրդային հանրապետության վրա։ Դրան ապացույց եր ծառայում ավտորո-գերմանական զորքերի հարձակումն Ուկրաինայի և Բելոռուսիայի վրա։ Մյուս կազմից բռն Գերմանիայում կարող եյին հաղ-

թանակ տանել կառավարող վերնախամի այն իսմբերը, վորոնք կողմնակից եյին մեր յերկրի դեմ ինտերվենցիան ուժեղացնելուն և դեմ եյին մեզ հետ հաշտություն ստորագրելուն :

Հաշվի առնելով այդ բոլորը, Լենինն անխնա պայքար եր մղում պատերազմի տրոցկիստական-բուխարինական պրովոկատորների դեմ, պնդելով, վոր անհապաղ ստորագրվի հաշտությունը, վորքան ել ծանր լինեն դրա պայմանները : Լենինը մոմենտի գլխավոր խնդիրն եր համարում Խորհուրդների հանրապետության, վորպես համաշխարհային պրոլետարական հեղափոխության, հենարանի և բազայի պահպանումն ու ամրապնդումը : Դրա հետ միասին Լենինը թույլ չեր տալիս իմպերիալիստական գիշատիչներին դիմումագրություն ցույց տալու ամենաջնջին թուլացում, մինչև վոր վերջնականապես ստորագրվեր և հաստատվեր հաշտությունը : Դեռ հաշտության պայմանագիրն ստորագրելու նախորյակին, 1918 թվի մարտի 2-ին Լենինը բոլոր Խորհուրդներին հեռագրով ուղարկեց մի հրաման, վորով պահանջում եր ուժեղացնել ձանապարհների, կամուրջների և խճուղիների պայթեցման նախալարաստությունը, հավաքել և զինել ջոկատները, շարունակել արագ եվակուացիան և դենքերը փոխադրել յերկրի խորքը :

Կարմիր Բանակից դաժան հակահարփած ստանալով և կորցնելով Պետրոգրադը զավթելու հույսը, ոտարերկրյա ոկուպանտները 1918 թվի մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում ստորագրեցին հաշտության պայմանագիրը : Սակայն Կենտրոնական ռադան Ուկրաինայի որինական կառավարություն ճանաչելու ձևական

սամալվակով իմպերիալիստական զորքերը շարունակում ելին զավթել ուկրաինական հողը, լիկվեդացիայի յենթարկելով Խորհուրդները, թալանելով ուկրաինական ժողովրդին : Ոկուպանտներն իրենց հետ ստրկություն և չտեսնված տեսող եյին բերում : Նըրանք ամենաջնջին դիմադրության համար դնդակահարում ու կախում եյին ուկրաինական բանվորներին ու դյուղացիներին :

«Ավտորիայի ու Գերմանիայի իմպերիալիստները, — դրում եր այն ժամանակ ընկեր Ստալինը, — իրենց սվիններով բերում են մի նոր, խայտառակ լուծ, վորը բնավ ակելի լավ չե հնից, թաթարականից, — այս ե Արևմուտքից կատարվող արշավանքի իմաստը»¹⁾ :

Ուկրաինական ազատասեր ժողովուրդն ոտարերկրյա ոկուպանտների արշավանքի դեմ ազատագրական հայրենական պատերազմի դուրս յեկավ : Ուկրաինայի բանվորներն ու գյուղացիները կազմակերպեցին Կարմիր Բանակի և Կարմիր գվարդիայի ջոկատներ, ապրուտամբում եյին ինտերվենտների դրաված մարզերում : Լուգանսկի մետաղագործները և Դոնեցի շախատյորները հերոսաբար պայքարում եյին Դոնբաս ժամանած ընկեր Վորոշիլովի զեկավարությամբ : Նըրանք զգալի հարվածներ եյին հասցնում ոկուպանտներին, ցույց տալով խորհրդային ժողովրդի համար անձնուրացությամբ պայքարելու որինակներ :

Հակահարված տալով ոտարերկրյա զավթողներին, բուլշետիկները միաժամանակ կատարում եյին և

1) Сталин, Статьи и речи об Украине. стр. 40.

Լենինի նակաղը բոլոր արժույթները Խորհրդայէն Ռուսաստան փոխադրելու մասին։ Դրանում մեծ գեր խաղաց ընկեր Որջոնիկիձեն, վորը նշանակված եր խաղաց ընկեր Որջոնիկիձեն, նա Ռուսաստանի լով ուկրաինական բոլոնիկներին, նա Ռուսաստանի լով ուկրաինական բոլոնիկներին, սարքավորումը, խորքը փոխադրեց գործարանների սարքավորումը, սարքավորումը փոխադրեց գործարանների սարքավորումը, պարենը և մեկ ու կես սարքավորումը պարենը և մեկ ու կես սարքավորումը, վորը պահպատմ եր բան-կերում։

Զավթելով Ուկրաինան, ոկուպանտները ձգում ելին դուրս դաշ նրա սահմաններից և կտրել յերկաթուղին, վոր Խորհրդային Ռուսաստանը կապում եր հարավի հետ։ Այդ կապակցությամբ լենինը հետեւյալ կարգադրությունն արագ Ռազմական գործերի ժողովրդական կոմիսարիատին։

«... Անհապաղ ձեռք առնել նրանից կախված բոլոր միջոցները՝ Խարկովի նահանգի արևելյան սահմանը, մանավանդ Զերտկովո կայարանը պաշտպանելու համար, վորը զրավել են ձգում գերմանացիներն ու գայդամակները, վորպեսզի կտրեն յերկաթուղային հաղորդակցությունը Խոստովի հետ։

Մանրամասնությունների մասին բանակցել Ստալինի հետ։

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահ՝
Վ. Ուլյանով (Լենին)»¹⁾։

Լենինն աչալրջությամբ հետեւում եր իմպերիա- լիստական գեշտափչների բոլոր գետավորություններին, վորոնց նպատակն եր թուլացնել մեր պաշտպանու-

նակությունը։ Այսպիս, որինակ, յերբ իմպերիա- լիստաները, ուղարկելով 20 հաղար զորք Քին- նական բուրժուազիային ողնելու համար, վորպեսզի վերջինս ճնշի հեղափոխությունը, — փորձեցին դավ- թել մեր Բալթյան նավատորմիզը, վոր գտնվում եր Հելսինկի Փորսում, — Լենինը հրամայեց նավերը տանել Կրոնշտադտ։

1918 թվի մարտին և ապրիլին բալթյան նավաս- տիները պատվով կատարեցին Լենինի հրամանը։ Հաղթահարելով բացառիկ դժվարությունները, բալ- թիցիները Ֆիննական ծովածոցում կատարեցին հե- րոսական «սառցե արշավը»։ Ռտարերկրյա նավերի և ինքնաթիւների կրակի տակ նրանք Կրոնշտադտ հաս- ցըրին ավելի քան 200 սազմական նավեր։

Իսկ յերբ ինտերվենտները, դրավելով Ուկ- րաինան և Ղրիմը, փորձեցին զավթել մեր Սև- ծովյան նավատորմիզը, Լենինը հրամայեց այն տանել Նովորոսիսկ։ Բայց ոկուպանտները, խախտե- լով Բրեստի պայմանագիրը, սկսեցին վորսալ մեր նավերը, պահանջելով, վոր գրանք վերադառնան Սև- վաստոպոլ։ Մենք այն ժամանակ չենքնք կարող դի- մադրություն ցույց տալ ռտարերկրյա նավատորմիզի միացյալ ուժերին, բայց մարտական նավերը իմպե- րիալիստներին տալը Լենինը համարում եր հանցավոր դավաճանություն հեղափոխությանը։ Ոկուպանտների կողմից մեր նավերը զավթելուց խուսափելու համար Լե- նինը կառավարության անունից առաջարկեց դրանք ջրասույզ անել։ 1918 թվի հունիսի 18-ին և 19-ին մոտ 20 նավեր ջրասույզ արվեցին։ Հետագայում մեր պանծալի եպրոնականները դրանք բարձրացրին ծովի հատակից,

1) «Ленинский сборник», XVIII, стр. 63.

և հիմա դրանք գրեթե բոլորը մտնում են մեր հզոր
Ռազմա-Ծովային Նավատորմիվի կարմի մէջ:

Այսպես հարկ եր լինում պայքարել ինտերվենտ-
ների դնմ, պահպանելով և փրկելով այն ամենը, ինչ
վոր պետքական եր պաշտպանության համար, և ա-
յնադժվարին պայմաններում ստեղծելով զինված ու-
ժերը—կարմիր Բանակը և Կարմիր Նավատորմիդը:

Ստեղծելով Կարմիր Բանակը, Լենինը մէծ ու-
շադրություն եր գարձնում նրա քաղաքական դաս-
տիարակության, կազմակերպչական ամրապնդման,
կոմպլեկտավորման և այն ամենի պլանաչափ հար-
թայթման, ինչ վոր անհրաժեշտ եր: Լենինին ողնում
եին նրա ամենամոտիկ զինակիցները,— Ստալինը,
Մոլոտովը, Սվերդլովը, Ֆրունզեն, Վորոշիլովը, Ռո-
ջոնիկիձեն, Լ. Մ. Կադանովիչը և այլն: Կարմիր
Բանակի կազմակերպման և ձեւավորման Համառու-
սական կոլեգիայի կազմակերպչական-աղիստացիոն
բաժնի կոմիսարն այն ժամանակ Լ. Մ. Կադանովիչն
եր: Նա տեղերն ուղարկեց մոտ 300 աղիստառը և
150 կազմակերպիչ, կապվեց բոլոր նահանգական
կենտրոնների հետ: Ավելացավ Կարմիր Բանակ մըո-
նողների թիվը:

Լենինը հոգում եր նաև Կարմիր Բանակի դեկա-
վար ապարատ ստեղծելու և այն որդանների մասին,
վորոնք պիտի զբաղվեյին ուազմական դործը սովո-
րած նոր կադրերով բանակը սխտիմատիկորեն հա-
մալրելու դործով: Այս խնդիրները կատարելու համար
ժողկոմիորէի 1918 թվի ապրիլի 8-ի դեկրետով տե-

ղական զինվորական կոմիսարիատներ ստեղծվեցին:
Իսկ ապրիլի 22-ին Համառուսական կենոգրոգծկոմն
ընկեր Սվերդլովի նախագահությամբ ընդունեց մի
դեկրետ աշխատավորների պարտադիր ընդհանուր
ուազմական ուսուցման մասին և հաստատեց հանդի-
սավոր խոստաման—Կարմիր Բանակի և Ծովային Նա-
վատորմիդի առաջին յերդումի ձևակերպումը:

Կարմիր Բանակի կուսակցական ղեկավարությունն
ուժեղացնելու, նրա քաղաքական համախմբման և կո-
մունիստական դաստիարակության համար Լենինի
ցուցումով 1918 թվի ապրիլին հիմնվեց զինվորական
կոմիսարների ինստիտուտ և ստեղծվեց զինվորական
կոմիսարների Համառուսական բյուրո, վորը հետա-
գայում վերակազմվեց իրեւ ԲԳԿԲ Քաղվարչու-
թյուն: Կոմիսարները հսկայական գեր խաղացին
Կարմիր Բանակի շինարարության և ամրապնդման
գործում: Նրանք իրենց շուրջը համախմբեցին զորա-
մասերի բոլշևիկներին և նրանց հետ միասին մար-
տիկների մասսաներին վոգեչնում եյին հերոսաբար
պայքարելու բազմաթիվ թշնամիների դեմ: Լենինը
կոմիսարներին համարում եր խորհրդային իշխանու-
թյան և կուսակցության ներկայացուցիչներ Կարմիր
Բանակում:

«Առանց զինկոմի մենք Կարմիր Բանակ չեյինք
ունենա»— ասում եր Լենինը:

Կարմիր Բանակի կազմակերպումն ու ամրապն-
դումը դժվարանում եր նրանով, վոր բացակայում
եր մշտական, վորակյալ հրամանատարական կազմը.
Հրամակազմի ընտրականությունը, վոր հին բանակում
սահմանվել եր 1917 թվի դեկտեմբերին ֆողկոմիոր

չի հատուկ դեկրետով, նպատակ ուներ Ամերիկացիան
յի յենթարկել Հին սպայության կաստայականոււ-
թյունը, սպայություն, վորը հավաքագրվում եր չո-
հաղործող դասակարգերի միջավայրից: Կարմիր Բա-
նակում, վորը հանդիսանում ե պրոլետարական դիկ-
տատուրայի սպառազեն հենարանը, հրամկազմի ընա-
բականությունը հանդում եր միայն հրամանատարների
հաճախակի փոփոխման, վորն անդրադառնում եր
նրա կազմակերպվածության, կարդապահության և
մարտունակության վրա:

Այս պատճառով 1918 թվի ապրիլի 22-ին հրամ-
կազմի ընտրականությունը վերացվեց: Միաժամանակ
լայնացվեց հրամանատարական դասընթացների ցան-
ցը, ստեղծվեցին հաստուկ (գնդացրալին, հրետանա-
ցը, հեծելաղորային և այլն) դասընթացներ, ուր
յին, հեծելաղորային և այլն) դասընթացներ, ուր
կարմիր Բանակի հազարավոր լավագույն մարտիկ-
ները պատրաստվում եյին կատարելու բգկի հրա-
մանատարների պատվավոր պարտականությունը:
Միևնույն ժամանակ մասնակի կերպով ներգրավվում
եյին զինվորական հին մասնագետները, թե իրա-
համանատարական դասընթացների դասատուներ
թե շտաբների կազմակերպմանը մասնակցողներ:

Այսպիսով Կարմիր Բանակը վերածվում եր Կա-
նոնավոր բանակի:

Շուտով դրությունը պահանջեց Կարմիր Բանակի
ուժեղացման նոր միջոցներ: Հյուսիսում, Մուրմանսկի
Խորհրդի նախկին նախագահ, տրոցկիստական դոր-
ծակալ Յուրեկի դավաճանական քաղաքականության
հետևանքով անդիմական իմպերիալիստներն ափ հա-
նեցին իրենց դորքերը: Ապրիլի 5-ին Հեռավոր Արե-

վելքում ճապոնացիներն ինտերվենցիա սկսեցին: Վոլ-
գայի լրջանում և Սիբիրում անգլո-ֆրանսիական իմ-
պերիալիստները մայիսի վերջին կաղմակերպեցին
չեխուլովակյան կորպուսի խոռվությունը, իսկ այդ
կորպուսը ստեղծված եր Ժամանակավոր կառավա-
րության որոք, Ռուսաստանի տերիտորիայում,
չեխ-սլովակի ռազմագերիներից: Եսերներն ու սպի-
տակ գվարդիականները չեխո-սլովակների ողնությամբ
վոչչացնում եյին Խորհուրդները, գնդակահարում և
կախում: Եյին բանվորներին ու գյուղացիներին և հա-
կահեղափոխական կառավարություններ եյին ստեղ-
ծում:

Միջին Ասիայում անգլիական ինտերվենտները
հուլիս ամսում ողնեցին եսերներին—սպիտակգվար-
դիականներին՝ հակախորհրդային խոռվություն
բարձրացնելու և Թուրքմենիան բռնազրավելու: Անգ-
լիացիների փողերով բասմաջների բանդաներ եյին
ստեղծվում:

Անգրկովկասում անգլիական ինտերվենտներն ե-
ներների և մենչեիկների հետ միասին կարողացան
պարտություն պատճառել Բագվի Կոմունային, բռո-
նեցին Բագվի 26 կոմիսարներին, տարան Թուրքմե-
նիա և այնտեղ զաղանաբար գնդակահարեցին:

Ուկրաինան զավթել եյին ոկուպանտները:

Դոնի ուսյոնում գեներալ Կրասնովը ոկուպանտ-
ների ողնությամբ բանակ կաղմակերպեց և նրանով
հարձակման անցավ Յարիցինի վրա, վորպեսզի միա-
նա սիրերյան հակահեղափոխության:

Յերկրի կենտրոնում, Յարոսլավլում, Մուրո-

մում, Ծիբինսկում և այլ քաղաքներում եսերներն
ու սպիտակգվարդիականները հուլիսին մի շաբթ իւլ-
ուովություններ բարձրացրին, վորապեսդի հեշտացնեն
ոտարերկրյա ինտերվենտների պայքարը խորհրդացին
իշխանության դեմ: Մռակվայում գործում են ին
«Ճախ» եսերները և արոցկիստական-բուժարինական
բանդիտները: Դեռ մարտին նրանք միասին զավա-
գրություն սարքեցին խորհրդային իշխանության դեմ
և պատրաստում եյին լենինի, Ստալինի և Սվերգո-
վի չարագործական սպանությունը: Ոգտվելով նրա-
նից, վոր յերկրում սրվում է զրությունը, «Ճախ»
եսերները արոցկիստական-բուժարինական բանդայի
հետ միացած՝ հակառակության խռովություն
բարձրացրին և սպանեցին դեմանձական դեսպան
Միրբախին, ճգտելով նոր պատերազմի սլրովոկացիա
սարքել Խորհրդային Հանրապետության դեմ և զրա-
նով իսկ կործանել նրան: Ոտարերկրյա հետախույժ-
ները դավագրություններ եյին սարքում, լրտեսների
և դիմերսանտների բանդաներ եյին կազմում:

Եսերները տեռորիստական ակտեր կազմակերպեցին լենինի և նրա զինակիցների դեմ: Հունիսի 20-ին նրանք սպանեցին Վոլոդարսկուն, ողոստոսի 30-ին՝ Ուրիցկուն. նույն որը կին եսեր Կատլանը չարագործական մահավորձ կատարեց Վ. Ի. Լենինի դեմ՝ նրան վիրավորեց յերկու թունավորված գնդակով:

«Ընկերներ», — ասում եր Լենինը, — անլլո-Փրան-սիական խմաբերիալիզմի և ռուսական հակուհեղափո-խական բուրժուազիայի այդ միացյալ ճիգերից բղիք-այն, վոր հիմա մեղանում քաղաքացիական պատե-րազմը... միախառնվեց արտաքին պատերազմի հետ

իբրև մի անխղելի ամբողջություն։ Կուլակային ապլատամետությունը, չեխո-սլովակյան խռովությունը Մուրմանսկի շարժումը, — սա մի պատերազմ է վորը շարժվում և Ռուսաստանի վրա...»¹⁾։

սլի խառնութեր որ ուշադ
Տեսնելով, վոր ոտարերկրյա ինտերվենտների և
ներքին հակածեղափոխության միացյալ ուժերը հար-
ձակում են զործում Խոբէրդային Հանրապետության
վրա, կուլակությունն իր հերթին մի ամբողջ շարք
ապստամբություններ բարձրացրեց և համար գիմա-
դրություն եր ցույց տալիս հացը պետության հանձ-
նելուն, աշխատելով սովոր ճիրաններում խեղդել խոր-
հըրդային իշխանությունը:

կենինի կոչով կաղմակերպվեց արշավաք հայր Համար, — առանց հացի չեր կարելի պահել խորհը բաղադրի իշխանությունը և ստեղծել ուժեղ Կարմիր Բագրային իշխանությունը

1) Ленин, Сочинения, т. XXIII, стр. 160.

նակ: Լենինն այն որերում զբում եր, վոր պայքա-
րել հացի համար, նշանակում ե պայքարել հակածե-
ղափոխության դեմ, պայքարել հանուն սոցիալիզմի:

Ոտարերկյա ռազմական ինտերվենցիայի և ներ-
քին հակածեղափոխության դեմ մի քանի ճակատնե-
րում մզգող սուր պայքարի այդ լարված պայման-
ներում լենինն առաջարկեց կարմիր Բանակի վար-
չության կենտրոնացման, նրան կանոնավոր բանակի
վերածելու և նոր, պատրաստված ռեզերվներով հա-
մալրելու խնդիրները:

Խորհրդային կառավարությունը 1918 թվի մայիսի
29-ին հրատարակեց մի վորոշում, վորի համաձայն
կամավոր ծառայությունից պետք եր անցնել բան-
վորների և չքավոր գյուղացիների ընդհանուր մորի-
լիզացիային կարմիր Բանակ: Վոչ աշխատավորական
տարրերը ներգրավվում եյին թիկոնչային աշխար-
հաղորի մեջ, բանակին սպասարկելու համար: Հու-
նիսի սկզբին ճակատամերձ գոտում տեղի ունեցավ
հինգ հասակի մորիլիզացիա, վորով մի անդամից
ավելացավ կարմիր Բանակի թիվը:

Գունդ նշանակվելու ժամանակ կարմիր Բանակի
մարտիկները լրացնում եյին ուելիսարացիոն քարտե-
րը և ստորագրում եյին հետեւյալ պարագայությունը,
վորը ծառայում եր իրեմ յերդում:

«Ես, ներքեւում ստորագրողս, պատրավորվում
եմ Բանվորա-Գյուղացիական կարմիր Բանակի շար-
քերն ընդունվելու որվանից անառարկելիութեն կատա-
րել Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և նրա
նշանակած անձնավորությունների բոլոր կարգադրու-
թյունները: Խոտորեն պահպանել դիսցիլինա ծառա-

յության պարտականությունները կատարելիս, անո-
ռարկելիորեն յենթարկվել Խորհուրդների նշանակած
ընկ. հրահանգիչ-հրամանատարների հրամաններին,
խնամքով վերաբերվել հաղուստեղենի, հանդերձան-
քի և զինման բոլոր առարկաներին, հիշելով, վոր
այդ բոլորը մեր ժողովրդական սեփականությունն
ե: Յես պարզ գիտակցում եմ, վոր ներկա պարտա-
վորությունը խախտելու դեպքում յես յենթակա յեմ
ժողովրդական Դատարանին (արիբունալին)»:

Այն բանվորներն ու գյուղացիները, վորոնք ըն-
դունվել եյին կարմիր Բանակ, պատվով կատարում ե-
յին իրենց պարտավորությունները և ենտուղիազմուկ
կովում ինտերվենտների և սպիտակզվարդիականների
դեմ, իրենց հայրենիքը թշնամուց աշխատելու համար:

Խորհուրդների Զամառուսական Վ Համագումարը,
վոր հավաքեց հուլիսի սկզբին, հավանություն տվեց
Խորհրդային կառավարության ձեռնարկումներին և
կարմիր Բանակի հարցի վերաբերյալ ընդունեց մի
հատուկ վորոշում, վորը միանվամայն Համապատաս-
խանում եր Լենինի առաջադրած ինդիրներին: Համա-
գումարի վորոշման մեջ զլիսավորակես ուշադրու-
թյուն եր դարձված կարմիր Բանակի ուազմական
վարչության և կազմակերպման գործում հետեւողա-
կան ցենտրալիզմ իրականացնելու վրա: Համագու-
մարն ընդհանուր զինվորական ծառայություն սահ-
մանեց: Համագումարը հատուկ ուշադրություն
դարձրեց հրամանատարական և կոմիսարական կազ-
մի կազմերի ընտրության վրա: Համագումարն ընդ-
գծում եր, վոր—

«զինվորական կոմիսարների պոստերում,— վո-

բռնց հանձնվում ե բանակի բախտը, պետք ե նշանակվին միայն իսկական հեղափոխականները, պըսլետարիատի և զյուղական ժքամորության դործի տուկուն. մարտիկները»:

Խորհուրդների Վ Համագույմարի վրոշչուսումը
մեծ նշանակություն ունեցան Անդինի այն ցուցում-
ների իրացման գործում, վրանք վերաբերում են
կարմիր Բանակն ու յերկրի պաշտպանությունն ամ-
րապնդելու միջոցներին: Տեղական զինվորական կո-
միսարիատներն արդեն հուլիսի 29-ին հաշվի առան
գենք կրելու ընդունակ 18-ից մինչև 40 տարեկան ամ-
բողջ բնակչությանը:

Յերկրի բոլոր զինված ուժերը միավորելու վեհապեր ուղարկեցաւ ողոստոսի 19-ի գեկրետով Կարմիր Բանակի առանձին ջոկատներն ու զորամասերը վերածվեցին զնդեհի, դիվլողիաների և բանակների։ Կատարվեց Հյուսիսային, Արևելյան, Հարավային և այլ ուղղման ճակատների ճշգրիտ սահմանադատում։ Արևելյան ճակատի զորքերը վճռական հարձակման անցան չեխոս-սլովակյան խոռվարանների և սպիտակ գվարդիականների դեմ։ Հարավային ճակատի կարեռադույն տեղամասում, Յարիցինի ուայոնում, ուր միաժամանակ վճռվում եյին հացի համար և հակահեղափոխության դեմ պայքարելու խնդիրները, 10-րդ բանակի զորամասերն ընկերներ Ստալինի և Վորոշիլովի ղեկավարությամբ հերոսաբար հետ եյին մղում կրասնովի սպիտակ-կաղակական բանդաների հարձակումը։

ի պատասխան այն չարագործական մահավիրձի,
վոր եսերները կատարեցին լենինի դեմ, ընկեր

Սվերդլովի առաջարկով Համառուսական կենտրոնը
կոմը սեպտեմբերի 2-ին հայտարարեց մասսայական
կարգիր տեսոր եսելների, մենչեւկների, բուրժուա-
զիայի, կուլակների և այլ հակածեղափոխականների
դեմ: Նույն որն ստեղծվեց Հեղափոխական Ռազմա-
կան Խորհուրդ:

— Թանկապին իլլիչ, Զեր հայրենի քաղաքի՝
լիմբիրսկի առումը, — այդ պատասխան և Զեր մի վեր-
ջուն, իսկ յերկրորդ վերքի համար պատասխան կլինի
յամբարքի առումը:

Յեվ նրանք չուտով կատարեցին իրենց մարտական յերգումը. Հոկտեմբերի 7-ին դրավվեց Սամարան :

Մարտիկներն ու հարամանատարներն ողտպում ելին
ամեն մի հարմար առիթից, վորակեսդի վողջույն հա-
ղորդելին լենինին, վորակեսդի հայտնելին նրան ի-
նենց անսահման նվիրվածության զգացումը: Լենինից
դովասանք ստանալով, նրանք հսկայական բերկրանք

Եյին զդում։ Դրա որինակներից մեկը կարող է ծառայել հետեւյալ հատվածն այն խոսակցությունից, վոր Յարեցինից ընկեր Վոլոշիլովն ուղիղ հեռադրամ թերով ունեցել եր ընկեր Ստալինի հետ, վորը ժամանակավորապես դժուռում եր Մոսկվայում։

«Վորոշիլով. — ... Մեղանից վողջույն ընկեր իւլիչին, սեղմում ենք ձեռքը։

Ստալին. — Իւլիչը հոգով Զեղ հետ ե, նա սիրեց Ձեզ։

Վորոշիլով. — Այդ մեզ համար ամենամեծ պարզեցն ե...»։

Նշելով ստացված արդյունքները կարմիր Բանակի ստեղծման և ամրապնդման գործում և նրա մարտական առաջին հաջողությունները ուղղմածակատներում, Լենինը նախատեսեց ե՛լ ավելի սուր պայքարը միջազդային իմաստիալիզմի դեմ։ Դեռ հիվանդ վիճակում, Լենինը հոկտեմբերի 1-ին ընկեր Սվերդլովին ուղղված գրության մեջ և հոկտեմբերի 3-ին Համառուսական կենտզործկոմին գրած նամակում դընում եր յերեք միլիոնանոց բանակի ստեղծման խընդիրը։

«...Բանակը ստեղծվում ե, — գրում եր Լենինը, — բանվորների և չքավոր գյուղացիների կարմիր Բանակը, վորոնք պատրաստ են ամեն զոհաբերության՝ սոցիալիզմը պաշտպանելու համար։ Բանակն ամրապնդվում ու կոփվում ե չեխո-սլովակների և սպիտակդժարդիչականների դեմ մզկող ճակատամարտերում։ Հիմքն ամուր ե դրված, պետք է շտապեցնել շենքի կառուցումը։

Մենք վորոշել եյինք գարնանն ունենալ մեկ միլիո-

նանոց բանակ, մեզ հիմա յերեք միլիոն մարդուց բաղկացած բանակ ե հարկավոր։ Մենք կարո՞ղ ենք այն ունենալ։ Յեվ մենք այն կունենանք³¹⁾։

Կարմիր Բանակի շինարարության մեջ լուրջ խոչընդուն եյին հանդիսանում տրոցկիստական մեթենայությունները։ Ոգտվելով Ռէն նախադահի իր քենայությունները, Տրոցկին իր մարդկանց նշանակում եր բարդքից, Տրոցկին իր մարդկանց նշանակում եր բանակի բարձրագույն հրամանատարական պաշտոններին, ուղղամակատների իրաւությունում պատասխանատու գեներալականներին, վորոնք կապված եյին սպիտակդժարդիչականների հետ։ Աշխատելով թուլացնել տակդվարդիչականների հետ։ Կարմիր Բանակում, կուսակցության ղեկավար դերը կարմիր Բանակում, կուսակցության ղեկավար դերը կոմիսարները, քաղորդնա թուլացնել չեր տալիս, վոր կոմիսարները, քաղորդներն ու կուսակցմակերպությունները միջամտեն ուղղմական մասնագետների գործողություններին։ Անտեսելով կուսակցության վորոշումները և Լենինի կուսակցության վորոշումները, այդ դավաճանը թուլացուղղակի դիրեկտիվները, այդ դավաճանը նում եր կարմիր Բանակի մարտունակությունը։

Բայց Լենինը և Ստալինն ամեն անդամ, նկատելով Տրոցկու դավաճանական գործերը, խփում եյին նրա ձեռներին։ Այսպես, որինակ, ոգտվելով նրանից, վոր վիրավորված Լենինը ժամանակավորապես հեռացել եր ուղղամական աշխատանքն անմիջականորեն ղեկավարելուց և Ստալինը զբաղված եր Յարեցինի պաշտպանությամբ, Տրոցկին անձնապես հակահեղափոխական դեներալ Սիտինին նշանակեց ամբողջ Հափոխական դեներալ Սիտինին նշանակեց ամբողջ Հափոխական ճակատի հրամանատար և այնպիսի կարգավայրին ճակատի հրամանատար և այնպիսի կարգա-

1) Լենին, Сочинения, т. XXIII, стр. 217.

դրություններ արեց, վորոնց կատարումը կհասցներ Յարիցինի անկման: Նկատելով սպառնացող վատանդը, Ստալինը և Վորոշիլովը դրա մասին հետեւյալ հեռագրով անմիջապես ազդանշան տվին լենինին.

«Մենք հեռագրով ստացանք Տրոցկու հրամանը, վորի պատճենը և վորի պատասխանը Դուք յերկի արդեն ստացել եք: Մենք դանում ենք, վոր այդ հրամանը, գրված լինելով այնպիսի մի մարդու կողմէց, վորը վոչ մի հասկացողություն չունի Հարավային ճակատի մասին, սպառնում է Հարավում ուղղաձանկատի և հեղափոխության բոլոր գործերը հանձնել գեներալ Սիտինին, մի մարդու, վորը վոչ միայն պետք չե ուղղաձանկատում, այլև արժանի չե վստահության, ուստի և վնասակար ե: Մենք, իհարկե, համաձայն չենք ուղղաձանկատը կործանել մեկ անհուսալի գեներալի համար: Տրոցկին կարող եքողարկվել կարգապահության վերաբերյալ ֆրազով, բայց ամեն վոք կհասկանա, վոր Տրոցկին Հանրապետության Ռազմական Հեղափոխական Խորհուրդը չե, իսկ Տրոցկու հրամանը Հանրապետության Ռազմահեղափոխական Խորհրդի հրամանը չե:

Հրամանները միայն այն ժամանակ վորեւ եմ մաստ ունեն, յեթե դրանք հենվում են ուժերի հաշվառման և գործին ծանոթ լինելու վրա: Ինպահանձակատը հանձնել վստահություն չներշնչող մարդուն, ինչպես այդ անում ե Տրոցկին, նշանակում ե վոտնահարել տարրական պատկերացումը պրոլետարկան կարգապահության և հեղափոխության, ուղղաձանկատի շահերի մասին: Նկատի առնելով այդ, մենք, վորպես կուսակցության անդամներ, կարա-

կանապես հայտարարում ենք, վոր Տրոցկու հրամանների կատարումը համարում ենք հանցագործություն, իսկ Տրոցկու սպառնալիքներն անարժան:

Անհրաժեշտ ե կուսակցության կենտրոնում քըննարկել Տրոցկու վարքի հարցը, Տրոցկու, վորը վատարանում ե կուսակցության ամենաականավոր անդամներին ի հաճույս ուղղմական մասնադետների թվով կատարի մավաճանների և ի վնաս ուղղմաձան պատկանող դավաճանների: Զարց զնել Տրոցկատի ու հեղափոխության շահերի: Զարց զնել Տրոցկու կողմից անհատորեն հրամաններ հրամարակելու կողմից անհատորեն հրամաններ, վորոնք անթույլարելիության մասին, հրամաններ, վորոնք բոլորովին հաշվի չեն առնում տեղի և ժամանակի բոլորովին հաշվի չեն առնում տեղի և ուղղաձանկատին քայլայում են ոպաւպայմանները և ուղղաձանկատին համարկան հակահեղափոխությունը: Վերանայել անկուսակցական հակահեղափոխությունը մեր ներկայացուցչին: Կանների թվին պատկանող ուղղմական մասնադետների հարցը:

Մենք կուսակցության կենտրոնին առաջարկում ենք այդ բոլոր հարցերը քննարկել առաջնահերթ նիստը, վորին մասնակցելու համար առանձին կարեքի տում, վորին մեր ներկայացուցչին:

Կուսակցության կենտրոնի անդամ՝ Ստալին:

Կուսակցության անդամ՝ Վորոշիլով:

Կուսակցության անդամ՝ Հեռականում ե Վերեռում բերված հեռականում հանդիսանում ե Տրոցկու պարզապես վնասարարական հրամանների և Տեղենայությունների նկատմամբ բոլշևիկյան վերաբերմունքի որինակ:

Լենինի միջամտության չնորհիով վերացվեցին Տրոցկու դավաճանական կարգադրությունները: Զարց զնել դավաճանական կարգադրությունները: Զարց զնել անդամների վորքերը, վորոնց զեկավարական բում եյին Ստալին ու Վորոշիլովը, պաշտպանեցին

Յարիցինը և հոկտեմբերին ջախջախեցին գեներալ Կը-
րասնովի բանդաները:

1918 թվի նոյեմբերից խորհրդային Հանրապե-
տության դրությունը խիստ վատացավ: Այդ ժամա-
նակ Անտանայի յերկրները լիակատար պարտություն
սղատմառեցին ավտորո-գերման-թուրքական կոալի-
ցիային և հենց դրանով Հարավորություն ստացան
իրականացնելու իրենց կողմից վազուց ծրագրված
լայն ինտերվենցիան մեր դեմ: Նոյեմբերին և դեկ-
տեմբերին Սև ծովում յերկացին Փրանսիական և
անդլիական եսկադրաները, վորոնք գեսանտ հանեցին
Դրիմ, Ողեսսա և Հարավային ծովափի մյուս քաղաք-
ները: Նրանք միաժամանակ զգալի ոգնություն ցույց
տվին խորհրդային իշխանության ամենաչար թշնա-
մուն—Գենիկինին, վորը սպիտակ գվարդիական ու-
ժեր եր Հավաքում կուրանում և Սև ծովին կից շր-
ջաններում:

Ավստրիայում և Գերմանիայում կատարված նո-
յեմբերյան հեղափոխությունից հետո խորհրդային
կառավարությունը 1918 թվի նոյեմբերի 13-ին վոչլն-
չացրեց Բրեստի թալանչիական պայմանագիրը և
կարմիր Բանակի զորամասերն ուղարկեց ուկրաինական
ժողովրդին ոգնելու: Ուկրաինական գնդերը լեզեն-
դային հերոս Շչորսի հրամանատարությամբ մի շարք
հարվածներ հասցրին ոտարերկոյա ոկուպանտներին:

Լենինը սիստեմատիկորեն կազ եր պահում Շչոր-
սի հետ և կոնկրետ ցուցումներ եր տալիս թե մարտա-
կան գործողությունները վարելու և թե ոկուպանտ-
ների զինվորների մեջ աշխատանք կատարելու մասին:
Շչորսն իր մարտիկների հետ անցնում եր հարեան

ոկուպանտների կայազորները և պատմում Գերմանիա-
յում տեղի ունեցած հեղափոխության մասին, ոգնում
եր զինվորներին՝ իրենց Խորհուրդներն ու կոմիտե-
ները ստեղծելու:

Գերմանական հեղափոխական զինվորները, Վորոնք
յեկել եյին մասնակցելու Շչորսյան Բողունյան գնդի
միտինդին, նոյեմբերի 13-ին վողջույնի հեռագիր ու-
ղարկեցին Լենինին:

Լենինն անմիջապես հեռագրով պատասխանեց
Շչորսի անունով.

«Շնորհակալ եմ վողջույնի համար: Առանձնապես
զգացված եմ Գերմանիայի հեղափոխական զինվորնե-
րի վողջունով: Հիմա չափազանց կարևոր ե, վոր-
պեսզի Գերմանիայի հեղափոխական զինվորներն ան-
հապաղ զործուն մասնակցություն ցույց տան Ուկ-
րաինայի ազատագրմանը: Դրա համար անհրաժեշտ ե
նախ՝ ձերբակալել սպիտակ գվարդիականներին և
ուկրաինական իշխանությունները, յերկրորդ, Գերմա-
նիայի հեղափոխական զորքերի կողմից պատզամա-
վորներ ուղարկել Ուկրաինայում գտնվող գերմանա-
կան բոլոր զորամասերը, նրանց արագ և լնդհանուր-
գործողության համար՝ հանուն Ուկրաինայի ազատա-
գործողության: Ժամանակը չի սպասում: Վոչ մի ժամ չի
կարելի կորցնել: Անմիջապես հեռագրեցեք, թե ար-
դյոք Գերմանիայի հեղափոխական զինվորներն ըն-
դունում են այս առաջարկը:

Ժողկոմիսորհի նախագահ՝ Լենին»

Շչորսը հմուտ կերպով կատարում եր Լենինի
գիրեկտիվները:

Լենինի առաջարկով Ուկրաինայում հարձակման

ընդհանուր դեկավարությունը հանձնարարվեց Ստամբուլին, վորը ստեղծեց Ռուկրախնական բանակի Ռազմա-հեղափոխական խորհուրդ և մի չարք հրամանատարությունը, վորոնք մասնակցել եյին Յարիցինի հերոսական պաշտպանության, ուղարկեց այդ բանակը:

Կարմիր Բանակին վիճակվեց Ռուկրախնայում կըռ-վել վոչ միայն ոտարեկուրյա ոկուպանտների, գետման Սկորոպազսկու և ատաման Պետլյուրայի բանդաների, այլև անգլո-Փրանսիական ինտերվենտների դեմ, վորոնք շարժվում եյին յերկրի խորքը:

Ել ավելի ահեղ վտանգ եր վրա հասնում արելել-քից, Սիրիոից: Անդիսական և Փրանսիական դենքարա-ների ողնությամբ Կոլչակն այնուղղ հեղաչընում կատարեց, վորը 1918 թվի նոյեմբերին հարձակման անցավ մեր Արևելյան ուղմանակատի ձախ թերի վրա, վորպեսզի Վյատկա-Կոտլաս ույսում միանա Հյուսիսից հարձակվող անգլո-Փրանսիական ինտերվենտների հետ և միասնական ճակատով շարժվի դեպի Մոսկվա:

Հարկավոր եյին վոչ միայն Կարմիր Բանակի հեռոսական ջանքերը ուղմանակատներում, այլև ամբողջ յերկրի առավելագույն լարվածությունը: Նոյեմբերի 30-ին հանրապետությունը ուղմական ճամբար հայտարարվեց:

Պաշտպանության, մատակարարման, ամուր թիկունքի կազմակերպման բնաղավառում խորհրդային իշխանության բոլոր որդանների գործողությունները կոորդինացիայի յեթարկելու համար, նույն որն ստեղծվում է Պաշտպանության Խորհուրդ, Լենինի դեմքավորությամբ: Պաշտպանության Խորհրդում

ընկեր Ստալինը Համառուսական կենտրոնակոմի ներ-կայացուցիչն եր և Լենինի փաստական տեղակալը: Լենինը Պաշտպանության Խորհրդի միջոցով մի շարք անհետաձդելի ձեռնարկումներ անցկացրեց Կար-շարք Բանակի մարտունակությունն ուժեղացնելու, նրան ուղմամթերքներ, պարեն ու հանդերձանք մա-տակարարելը բարելավելու բնաղավառում, գլխավոր ուշադրությունը դարձնելով ուղմանակատների վճռողական մասերի վրա: Լենինը Պաշտպանության վճռողական մասերի վրա: Լենինը Պաշտպանության Խորհրդի միջոցով վերահսկողության եր յենթարկում Խորհրդի գիտության գերատեսչության գործողությունները և առաջ եր մղում նրա աշխատանքը:

Այն ժամանակաշրջանում, յերբ Կուչակի գորքերը հարձակվում եյին Պերմի վրա, Լենինը պահանջում էր շտագ միջոցներ ձեռք առնել ուղմանակատի ազ-պատասխանատու մասն ամբացնելու համար: Դեկ-տեմբերի 13-ին նա կարգադրեց Ռազմա-Հեղափոխա-կան Խորհրդի նախագահին.

«Զախարանց տաղնապալից լուրեր են ստացվում Պերմից: Նրան վտանդ ե սպառնում: Վախինովում եմ, վոր մինք մոռացել ենք Ռւրալը. անպայման սեղմեցք Վացետիսին և ստուգեցք, թե արդյոք նա բա-վականաչափ յետանդո՞վ ե ոժանդակ ուժեր տալիս Պերմին և Ռւրալին...»

Լենինը պահանջում եր լայն ողնություն դույց տալ Արևելյան ճակատին: Այնուամենայնիվ Պերմն ընկավ, ավելի շուտ, հանձնվեց: Կատաստրոֆն այն-ընկավ, ավելի շուտ, հանձնվեց: Կատաստրոֆն այն-քան զգալի յեր, վոր կուսակցության կենակոմը, լե-նինի առաջարկով, ընկերներ Ստալինին և Զերժինս-կուն նշանակեց հետաքննելու Պերմի հանձնման պատ-

ճառները և ձեռք առնելու բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Արևելյան ամբողջ ռազմաճակատի վերականդնման համար :

Ձեռնամուխ լինելով Յ-րդ բանակի պարտության պատճառների հետաքննման, Ստալինը և Զերժինսկին հաղորդեցին Լենինին, թե ինչպիսի շտագ միջոցներ և ձեռնարկումներ են նշել ամբողջ Արևելյան ռազմաճակատը կարդի բերելու համար :

Ի պատճին առաջին հաղորդագրության՝ Լենինը 1919 թվի հունվարի 14-ին հեռուղբեց .

«Ստաց և կարդացի առաջին ծածկադրված հեռագիրը, շատ եմ խնդրում ձեզ յերկուսիդ անձամբ դեկագրել տեղում նշված միջոցները, վորովհետեւ այլապես հաջողության յերաշխիք չկա»:

Ընկեր Ստալինի վճռական գործողությունների չորհիվ Կոլչակի առաջխաղացումը դադարեցվեց և նրան չհաջողվեց միանալ հյուսիսից հարձակող անդամական ինտերվենտների հետ։ Ավելին։ Արևելյան ճակատի բանակները հարձակման անցան և հունվարի 22-ին գրավեցին Որենբուրդը, իսկ հունվարի 24-ին՝ Ռյալսկը։

Մուկվա վերադառնալով, Ստալինը և Զերժինսկին կենտրոնին ու Պաշտպանության նորհրդին մանրամասն հաշվետվություն ներկայացրին Պերմի անկաման պատճառների մասին։ Հաշվետվությունը հայտաբերեց Տրոցկու և նրա նշանակած մարդկանց վնասարարական պրակտիկան։ Խախտվել եր կոմպլեկտավորման դասակարգային սկզբունքը և ռազմաճակատ ելին ուղարկվել դասակարգայնորեն խորթ և թշնամի տարրեր։ բանակը թաղնվել եր առանց ուղերմնե-

րի գորամասերն ավելորդ տեղն ուժառողակ ելին արվել անընդհատ կոփներում։ Հրամկազմի մեջ սպիտակ գվարդիականներ ելին խցկվել ։ զորամասերում թուլացել եր կուսակցական-քաղաքական աշխատանքը։ Մասնանշելով այլ բոլորի չարը գործ դնելը, վորոնք հասցրել ելին Պերմի անկման, Ստալինը և Զերժինսկին իստություններ արին կարմիր բանակի վարչության, կազմակերպման ու մատակարարման ամբողջ սխտեմի մասին։

Գլխավոր հարցերը, վորոնք հարուցված ելին Ստալինի և Զերժինսկու հաշվետվության մեջ, քըն-նարկման առարկա դարձան կուսակցության VIII համագումարում։

Կուսակցության VIII համագումարում ռազմական գրության և ռազմական քաղաքականության հարցի քննարկումը հակայական սկզբունքային նշանակություն ունեցավ։ Կարմիր Բանակը ստեղծվեց կուսակցության VII և VIII համագումարների միջանկալ ժամանակամիջոցում։ VIII համագումարը պետք ե հանրագումարի բերեր և նշեր ռազմական շինարարության հետագա ուղիները։

Համագումարում լենինը մատնանշեց, վոր Կարմիր Բանակի շինարարության գործում «... Մենք ընթանում ելինք փորձից դեպի փորձ... շոշափելով, փորձելով, թե ավյալ պարագայում ի՞նչ ճանապարհով կարելի յե լուծել խնդիրը...», վոր մենք պետք ե կարողանայինք և կարողայանք «... Ճնշված դասակարգից, վորին անբան անսառն ելին դարձել, կառաւցել մի բանակ, վորը համակված ե իսանդավա-

ռությամբ...»¹⁾: Մատնանշելով կապիտալիստական շրջապատումը և Խորհրդային հանրապետության ու կապիտալիստական յերկրների միջև ընդհարումների անխուսափելիությունը, Լենինն ընդդում եր, վոր անհրաժեշտ ե ռազմական դործի անդիմի կազմակերպություն ունենալ, վորը կարողանա լիովին ապահովել Խորհրդային պետության սրացտապանությունն իմակերիալիստական պետությունների ամեն տեսակ հարձակումներից: Իսկ այդ նշանակում եր, վոր պետք եր բանակի շինարարությունն ավարտել ռազմական գիտության ու տեխնիկային տիրապետելու հիմունքով:

Ըսկեր Ստալինը միշտ աջակցում եր Լենինին: Շոշափելով ռազմական հարցի դրվածքը կուսակցության VIII համագումարում, ըսկեր Ստալինն ասում ե, վոր այս ժամանակ խոսքը վերաբերում եր «...կամավորականությանը և պարտիզանչինային վերջ տալու անհրաժեշտության, յերկաթե կարդապահությամբ խսկական կառնավոր բանվորա գյուղացիական բանակ ստեղծելու անհրաժեշտության, ռազմական մասնագետներին այդ դործին մասնակից դարձնելու անհրաժեշտության...»²⁾:

Համագումարում հանդես յեկավ այսպես կոչված՝ «ղինվորական ոպողիցիան», վորի մեջ մտնում եր նախկին «ճախ կոմունիստների» զգալի մասը, վորոնք պայքարում ենին կանոնավոր բանակի դեմ, ռազմական մասնագետների ներդրավման դեմ, Կարմիր Բանակում յերկաթե կարդապահության դեմ:

1) Ленин, Сочинения, т. XXIV, стр. 121, 122.

2) Сталин, Об оппозиции, стр. 668.

Բացի այդ իմբրակից, «ղինվորական ոպողիցիան» մեջ մտնում եյին կուսակցությանը նվիրված կան կուսական աշխատական աշխատողներ ես: Զինվորական պատուակամական մեծամասնությունը, նաև «ղինվորագամակուների» մեջ մտնողները, խիստ զժուհ կան ոպողիցիայի: Ենջ մտնողները, վորը կարողանա լիովին ապահովանով, Եյին Տրոցկու ղեկավարությունից, այն պատճառով, վոր նա թշնամական վերաբերմունք եր ցույց տալիս վոր նա թշնամական վերաբերմունք էր ցույց տալիս վարչակում յեղած բոլշևիկյան հին կադրերին, խորբանակում յեղած բոլշևիկյան թվին պատկանող սարչվում եր նախկին գեներալաների առաջ, վորոնց զգալի մասը հազարակուսական եր: Մերկացնելով բանակային շինարարության քաղանարարության բնագավառում կուսակցության քաղանարարության տրոցկիստական խեղաթյուրումները, քականության տրոցկիստական խեղաթյուրումները, «ղինվորական ոպողիցիայի» մասնակիցները մինչ «ղինվորական ոպողիցիային»: Հանդես դարձ վին «ղինվորական ոպողիցիայի» սխալ պնդումների դեմ, «ղինվորական ոպողիցիայի» սխալ պնդումների դեմ, լենինը պահանջում եր Կարմիր Բանակում ամրացնել յերկաթե կարդապահությունը, ավելի վճռականութեն յերկաթե կարդապահությունը, ավելի վճռականութեն յերկաթե կարդապահությունը մնացուկները և արմավերացնել պարտիզանշինայի մնացուկները: Մագնել իսկական կանոնավոր բանակի սկզբունքները:

«Զալ» կազմալուծիչների դեմ մի առանձին թափով հանդես յեկավ ընկեր Ստալինը: Արինակներ բեկելով առանձին պարություններից, վորոնք յեղել ըելով առանձին պարություններից, վորոնք յեղել Եյին հրամանները չկատարելու և բանակի վարչության մեջ յեղած կազմալուծման նորհիվ, ընկեր Ստալինը պահանջում եր ամրապնդել կանոնավոր բանակը,

վորը «համակված և կարդապահության վողով, ու-
նի լավ դրված քաղաքական բաժնն, գիտե և կարող
ե առաջին հրամանով վրոտի կանգնել և գնալ թշնա-
մու վրա» :

Այստեղից բղխում եր մեր խնդիրը— «... համա-
խմբելով զինված գյուղացիությանը պրոլետարների
չուրջը, ավարտել իսկական կանոնավոր բանակի շե-
նարարությունը, բանակ, վորը միակ ընդունակն և
յերկիրը պաշտպանելու... Կամ կստեղծենք իսկական
բանվորա-գյուղացիական, արավելապես գյուղացիա-
կան, խստորեն կարգապահ բանակ և կպաշտպանենք
հանրապետությունը, կամ կկորչենք» (Ստալին) :

Համագումարը միահամուռ կերպով պաշտպանեց
կենին և Ստալինին ու մերժեց «ղինվորական ո-
պողիցխայի» առաջարկը, միևնույն ժամանակ համա-
գումարը հարվածեց Տրոցկուն, պահանջելով բարելա-
վել սալդական ապարատի աշխատանքը և ուժեղաց-
նել կուսկաղմակերպությունների և քաղորդանների
գերը կարմիր Բանակում :

Համագումարն իր վորոշումներում հաստատեց
կարմիր Բանակի, վորպես պրոլետարական պետու-
թյան կանոնավոր բանակի դասակարգային բնույթի
անդրդվելիությունը։ Համագումարի բանաձեռում մեծ
տեղ է տրվում այն դերին, վոր խաղում են զինվո-
րական կոմիսարները Կարմիր Բանակի կոմունիստա-
կան դաստիարակության և մարտական համախմբ-
ման դործում։

«Կոմիսարները,— ասված և բանաձեռում,— բա-
նակում հանդիսանում են վոչ միայն Խորհրդային
իշխանության ուղղակի և անմիջական ներկայացու-

ցիչները, այլև ամենից առաջ մեր կուսակցության,
նրա կարգապահության, նրա հաստատակամության
և արիության վորդին կրողներն այն պայքարում, վոր
մզգում և դրված նպատակն իրականացնելու համար։
Կոմիսարների աշխատանքը կարող է վակատար ար-
դյունքներ տալ միայն այն դեպքում, յեթե յուրաքան-
չյուր դրամառում այն հենվում է կոմունիստ զին-
վորների թշիջի անմիջական ուժանդակության վրա։
Կոմունիստական թշիջների թվական արագ աճը հան-
դիսանում է կարեռադույն յերաշխիք այն բանի, վոր
բանակն ավելի և ավելի կհամակվի կոմունիզմի ի-
դեաներով և գիտցիպլինայով։»

Համագումարի վորոշումները, վորոնք արտա-
հայում եյին լենինյան-ստալինյան զիծը ուազմական
հարցի նկատմամբ, նպատեցին Կարմիր Բանակի հե-
տագա ամրապնդման, վոր չափազանց կարեոր եր
յերկրին սպառնացող վասնդի կապահցությամբ։

Այդ վտանգը նշմարվեց համացումարի աշխատան-
քի որերում։ Անտանտան Խորհրդային Ռուսաստանի
գեմ կազմակերպեց ուժեղ, համակցված արշավանք,
վորի ընթացքում դիմավոր հարվածը հասցնում եր
կոլչակը։ Ոժանդակ հարվածներ հասցնելը հանձնա-
րաբվում եր Դենիլինին— հարավից, Լեռաստանին և
Յուդենիչին— արեմուտքից և անվլո-սպիտակ գվար-
դիական խառը ջոկատներին— հյուսիսից և Միջին
Ասիայում։

Յերկրի ներսում Հակահեղափոխական մի նոր
ալիք անցավ, վոր կազմակերպել եյին կուլակային-ե-
ներական տարրերը, վորոնք սպիտակ-դվարդիական-
ների և Անտանտայի հետ գործում եյին մի ընդհա-

նուր պլանով։ Եսերները և մենչեկիները բանվորների գործադուների պրովიնկացիաներ եյին սարքում, լրտեմների ու դիվերսաննաների իրենց ցանցի միջոցով ելեկտրոկայանների, կամուրջների պայթեցումներ երերկաթուղիների փչացում եյին պատրաստում։

1919 թվի գարնանը Լենինը քաղաքացիական պատերազմի բոլոր ճակատներից գլխավորը համարեց Արևելյան ճակատը։ Կոլչակը, վոր ահազին քանակությամբ զենք ու ռազմամթերք եր ստացել Անդլայից, ԱՄՆ-ից և այլ յերկրներից, կրկին հարձակման անցավ։ Կենարոնացնելով ավելի քան 140 հազար հիանալի զինված զորք, Կոլչակն արագությամբ առաջ եր շարժվում գլխավոր ուղղությամբ, հաղթահարելով մեր թուլացած և կոխվներում պահասած բանակների համառ դիմացքությունը։ Կարճ ժամանակամիջոցում կոլչակյանները զավթեցին Ռոֆան, Բուգուման և Բուգուրուսլանը։ Սպառնալով մեր քաղաքներին—Սիմբիրսկին, Կազանին, Սամարային, Կոլչակը նըշան բռնեց Մոսկվայի վրա։

Լենինն այդ որերում բացառիկ յեռանդ ցուցաբերեց Կոլչակին հակահարված տալու համար բոլոր ուժերն ու միջոցները մորիլիքացիայի յենթարկելու գործում։ Ինչպես և առաջ, կը տիկական մոմենտներին, Լենինը Պետրովդրադի բանվորներին կոչ տրեց ողնության հասնել Արևելյան ճակատին։

«Մենք խնդրում ենք Պիտերի բանվորներին, զբան եր Լենինը ապրիլի 10-ին, — վոտքի հանել ամեն ինչ, մորիլիքացիայի յենթարկել բոլոր ուժերը՝

Արևելյան ռազմաճակատին ողնելու... այնտեղ վճռը գում և հեղափոխության բախուց¹։

Ապրիլի յերկուսին կուսակցության կենտրոնի անունից Լենինը հրապարակում է Արևելյան ճակատի վերաբերյալ թիգիսները։ Լենինը խոսում է խորհրդագյին յերկրի համար չափազանց ահեղ վտանգի մասին։ Ամբողջ խորհրդային ժողովուրդը պետք է դիմունա այդ վտանգը, վորովհետեւ Կոլչակի դեմ հաղթանակ տանելու համար կղահանջմի ուժերի առավելագույն լարում։

Լենինն աշխատում է, վոր Կարմիր Բանակի նորակոչները զգան ամբողջ բանվոր դասակարգի հոգատարությունը։ Բացի զորահավաքին ըստամենայնի ոժանդակելուց, Լենինն արհմիություններից պահանջում և դինել ճակատամերձ դոտու բոլոր բանվորներին, մանավանդ Վոլգայի շրջաններում, դյուլացիությանը ներդրակել Կարմիր Բանակի շարքերը, պարենավորման ջոկատներ կաղմակերպել։ Կուսակցական կաղմակերպությունների, արհմիությունների, Կոոպերացիայի առաջ Լենինը խնդիր է դնում զենքով, ռազմամթերքով, հագուստով և այլ դույքով ոժանդակել բանակի մատակարարման։

Լենինը միաժամանակ կոչ եր անում անխնաս պայքար մղել մենշեկիների և եսերների դեմ, վորոնք մեր թիկունքում իրենց հակահեղափոխական գործողություններով ողնում եյին Կոլչակին։

Պաշտպանության Խորհուրդը Լենինի նախադահությամբ ապրիլի 14-ին առաջարկում է ԺՏԴԽ-ին

1) Ленин, Сочинения, т. XXIV, стр. 223.

(Փողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդին) ուժեղացնել Արևելյան ճակատի մատակարարումը մինչև իսկական կարիքի չափը: Մի քանի որից հետո Պաշտպանության Խորհուրդը լսում է բժիշ մատակարարման Կենտրոնական Վարչության հաղորդությունը և առաջարկում նրան՝ ոժանդակ դեր կատարող բոլոր զորքերն անհաղաղ վերապինել ճապոնական հրացաններով, իսկ ոռուսական հրացաններն ուղարկել ռազմաճակատ: ստուդիա պահեստներում յեղած ռազմական անհրաժեշտ դույքը և կազմակերպել դրա ռառաքումն Արևելյան ռազմաճակատ:

Բոլոր ռազմաճակատներից մանրամասն տեղեկաւթյուններ ունենալով, լենինը զեկավար աշխատողներին մեծ տակտով սովորեցնում եր կարողանալ մանյովքներ կատարել յեղած միջոցներով: Հետեղներով ուկրաինական աշխատողներին, վոր անհրաժեշտ և առանձնահատուկ ուշադրություն դարձնել Դոնեցի զորքերին, վորոնք կռվում են Դենիկինի դեմ, լենինը խոդրում ե մի շաբաթվա ընթացքում Կազմա ուղարկել առնվազն 2500 ձի: Մի քանի որից հետո լենինը նորից դիմում և ուկրաինական աշխատողներին, ինդքսով անհապաղ ուղարկել 75-100 բեռնատար ափտոմոբիլ և շտապ կարգով մի քանի հրետանային մարտկոց կազմակերպել Արևելյան ռազմաճակատի համար:

Լենինի և Կենտկոմի դիրեկտիվների համաձայն կուսակցական և արհետակցական կազմակերպությունները լայն աշխատանք ծալվալեցին կոմունիստներին, կոմյերիտականներին և արհմիությունների անդամներին մոբիլիզացիայի յենթարկելու համար:

Արևելյան ռազմաճակատ ուղարկվեցին ավելի քան 10 հազար կոմունիստներ և 3 հազար կոմյերիտականներ: արհմիություններն ուղարկեցին 25 հազար հոգի: Բացի դրանից, մոբիլիզացիայի կարգով ռազմաճակատ ժամանեց մոտ 125 հազար հոգի:

Ռազմաճակատների բանակները, ստանալով մարդկային և զենքի համարում, ավելի ուժեղացան և ապրիլի վերջին հարձակման անցան: Կոլչակին գլխավոր հարվածը հասցնում եր Արևելյան ռազմաճակատի Հարավային զորախումբը, վորը զտնվում եր հին բոլշևիկ, տաղանդավոր զորավար ընկեր Ֆրունզեի հրամանատարության տակ: Այդ խմբի մարտական կոմիսարն եր ընկեր Կույբիչևը— լենինի և Ստալինի լավագույն աշակերտներից և զինակիցներից մեկը:

Կասպիայում ընկեր Կիրովի բանած նյութերց վետենալով, վոր Դենիկինը մտադրվում է Կոլչակի հետ միանալ Վորովյայի մերձակայքում (Սարատովի ույանում), լենինը գերեկտիվ ավեց քչել Կոլչակին Վորովյայից վորքան կարելի յե հեռու և մինչեւ ձմեռ նվաճել Ուրալը: Ֆրունզեն, Հարավային զորախոմբի հրամանատարը, հաջողությամբ կատարեց լենինի այդ դիրեկտիվը: Ճնշելով կոլչակյանների կատաղի դիմադրությունը, ջարդելով ու խորտակելով Կոլչակի պլիսավոր ուժերը, Հարավային զորախոմբը, վորի կազմի մեջ մտնում եր ժողովրդական հերոս Զավակի հրամանատարության տակ գտնվող 25-րդ դիվիզիան, 1919 թվի ապրիլի վերջից մինչև մայիսի 17-ը գրամեց Բուլգուման, Բուլգուրուսանն ու Բելերեյը, իր համար ճանապարհ բաց անելով դեպի Ուֆա: Կոլչակյան զորքերը, ճակատից յենթարկելով կարմիր

Բանակի և թիկունքից—պարտիզանների հարվածներին, սկսեցին նահանջել դեպի արևելք:

Արեւլյան ռազմաճակատում կուսակցությոն և
անձամբ Լենինի ու Ստալինի լարված աշխատանքի
հետևանքով վճռական բեկում ստեղծվեց :

Բայց այդ ժամանակ Գենիկինն ու Յովկենիչն ու-
ժեղացրին հարձակումը Խորհրդային հանրապետու-
թյան վրա։ Բայտ Անտանտայի պլանի, նրանք պետք է
գետի իրենց քաշելին կարմիր Բանակի ուժերը և
թեթևադնելին Կույակի դրություննը։

Լենինն այն մոմենտում ավելի վտանգավոր եր համարում Յուղենիչին, վորը եստոնացի և Փինն սպիտակների ու անդլիական նավատորմիդի ոժանգակառ թյամբ հարձակվում էր դեպի Պետրոգրադ : Մայիսի սկզբին Լենինը Պաշտպանության Խորհրդի միջոցով անցկացրեց խիստ կարեւոր վորոշումներ Պետրոգրադի պաշտպանության մասին : Պետրոգրադում և նրան կից մի քանի նահանգներում հայտարարվեց պաշտպական դրություն, այդ նահանգներում մոռեիլիքացիայի յենթարկվածները թողնվեցին . Պետրոգրադի ճակատում, ստեղծվեցին արտակարգ յեռյակներ ներքին պաշտպանությունը դեկավարելու համար և այլն : Սակայն Յուղենիչը, տրոցկիստական դաւակալների դավաճանության հետևանքով, շաբունակում էր առաջինազգացումը գեպի Պետրոգրադ, պարտության պատճառելով 7-րդ բանակի փոքրաթիվ զորամասներին : Յուղենիչի լկտիությունն այնտեղ հասավ, վոր նա մայիսի 16-ին Պետրոգրադին ուսդիոյնք տառաջարկեց պնձնատուր լինել :

Կուսակցությունը Պետրոգրադի, Գյումրի, Նոյ-

գորոգի և այլ կուսկազմակերպություններին կոչ արեց դործազլել բոլոր ջանքերը՝ Պետրովը պաշտպանելու համար։ Պիտերի ռազմաձակատը, — ասված եր կոչում, — գտնուում է Հանրապետության ամենահերեւու ռազմաձակատը ից մեկը։

Կենտկոմը Լենինի ամենամոռ զինակցին— ընկեր Ստալինին ուղարկեց նաև այս ռազմաճակատը։ Ժամանելով Պետրոգրադ, ընկեր Ստալինը տեղում ծանոթացավ զրության հետ և իսկույն հաղորդեց Լենինին այն ռազմական միջոցների մասին, վոր անհրաժեշտ եր ձեռնարկել Յուլինիչին ջախջախելու համար։ Լենինի կարգադրությամբ Պետրոգրադի ճակատն ուղարկվեցին 8 բրիգադ, կուրօնանտների ջոկատները, և ուժեղացվեց ռազմամթերքների հայթայինումը։

Ըստավայրին ուղղված առաջին հեռագրերից
մեկում Լենինն արտահայտում եր իր կարծիքը Յու-
դենիչի հաջողության պատճառների մասին:

«Պետրողբաղի վրա սպիտակ զվարդիական հարձակման ամբողջ իրազբությունը՝ գրում եր Լենինը, ստիպում և յենթադրել, վոր մեր թիկոնքում, դուցե և հենց ուազմաճակատում, կա կազմակերպված գավաճանություն։ Միայն դրանով կարելի յե բացատրել հարձակումը համեմատաբար աննշան ուժերով, չեշտակի առաջշարժումը, ինչպես նաև կամուրջների հաճախակի պայթյունները դեպի Պետրոդրագ վնացող մադիստրալիներում։ Եերեսում ե, վոր թշնամին միանդամայն վատահ ե, թե մեզանում ուժմադրաթյան համար չկա վորեե չափով կազմակերպված ռոտզմական ուժ և բացի դրանից, հույս և դրանում թիկոնւթիւնության վրա (Հրետանութիւն պա-

հեստի հրդեհը Նովո-Սոկոլնիկիում, կամուրջների պայթյունները, այսորվա լուրերը Որեղեժի բունտի ժամին): Խնդրում եմ ուժեղ ուշադրություն դարձնեց այդ հանգամանքների վրա, շտապ միջոցներ ձեռք աւել դավադրությունները հայտաբերելու համար»:

Իրականությունը լիովին հաստատեց Լենինի յենթադրությունները: Ընկեր Ստալինը բանվորների, կարմիր բանակայինների և Արտակարգ հանձնաժողովի ողնությամբ հայտաբերեց դավադիրների, լրտեսների և դիվերսանտների մի խոչը շայկա, վորոնք բույն եյին գրել Պետրովարդում, Կրոնշտադտի ծովային բազայում մի քանի ամրություններում և 7-րդ բանակի շտաբում: Լրտեսությամբ, դիվերսիաներով, դավաճանաբար սպիտակ դվարդիականների կողմն անցնելով՝ նրանք հեշտացնում եյին Յուղենիչի հարձակումը: Դավադիրներին մեծ ողնություն եյին ցույց տալիս ոտարերկրյա դեսպանությունները, վորոնք դավադիրների և լրտեսների համար ծառայում եյին իրեւ դենքի պահեստներ և կապի կետեր:

Ընկեր Ստալինը կազմակերպեց դավադիրների անինա ջախջախում, լիկվիդացիայի յենթարկեց նորանց խորվությունը «Կրասնայա գորկա» և «Սերայուշշալ» կոչված ամրություններում ու իրեն հատուել վճռականությամբ ու անխոննջությամբ կարողացավ արագ բեկում ստեղծել ռազմաճակատում: Ընկեր Ստալինը ըրջադայում եր կովի տեղամասերում և մարտական կրակի տակ անձնական որինակով վորել վորում եր մարտիկներին՝ հերոսաբար պայքարելու թշնամիների դեմ: Հունիսի 22-ին ընկեր Ստալինը Լենինին հաղորդեց նախորդ որն սկսված հարձակման

ժամին, իսկ հունիսի 28-ին հեռագրեց ռազմաճակատում ձեռք բերված նոր հաջողությունների և վերցված ավարի մասին:

Այդ կապակցությամբ Լենինը Ստալինին հետեւյալ հեռագիրն ուղարկեց.

«Յեթե Պիտերի ճակատում դրությունը բարենըսպաս ե, պետք ե ամեն ինչ լարել արագ և վճռական հարվածի համար, վորովհետև զորքերը ծայրահղորդեն հարկավոր են ուրիշ տեղերում»:

Շուտով Յուղենիչը հետ շպրավեց դեպի Եստոնիայի սահմանները: Յուղենիչի գեմ տարված հաղթանակը, վոր ձեռք եր բերվել Լենինի ու Ստալինի անմիջական ղեկավարությամբ, վորոնք վողեչնչեցին Պիտերի բանվորներին, կարմիր նախատորմայիններին և 7-րդ բանակի մարտիկներին, — հնարավորություն առեց ավելի արագ ջախջախել Կոլչակին և անցնել Դենիկինի կործանման:

Կոլչակի և Դենիկինի մասին Լենինը վոչ մի բոռով չեր մոռանում, նույնիսկ Պետրովգրադի համար ամենադժվար որերին Լենինն անդուլ կերպով զբաղվում եր Կոլչակի գեմ ուղղված պայքարով, մինչև Կոլչակի լիակատար ջախջախումը:

Ի պատասխան Արեւելյան ճակատի մի քանի վայուեկավարների տրասունչներին, — ղեկավարների, վորոնք փորձում եյին ուժերի պակասությունից գանչպատվելով արդարացնել գործողությունների դանդաղությունը, Լենինը կոնկրետ դասեր եր տալիս, թե ինչպես պետք ե բոլցեկիկորեն աշխատել: «Զեղ հարկավոր ե անցնել ավելի հեղափոխական, ռազմական աշխատանքի, խզելով սովորականը: Ճակատամերձ

դուռության մորիլիկացիայի յենթարկեք 18-ից
մինչև 45 տարեկաններին... Նշանակելով յերկուա-
կան և յերեքական մարդ մեկ հրացանին, կոչ անելով
Ուրալից վոնդել Կոլչակին, մորիլիկացիայի յենթար-
կեցեք կուսակցության և արհմիությունների ան-
գամների 75 տոկոսին: Ուրիշ յերք չկա, հարկավոր և
անցնել հեղափոխականորեն աշխատելուն...»¹⁾:

Այս հեռագիրը բղխում եր ինինի այն հիմնա-
կան դիրեկտիվից, վոր պետք է մինչև ձմեռ նվաճել
Ուրալը, վճռականապես հարձակվել Կոլչակի վրա,
վարպեսպի վերջնականապես ջարդել նրան, հնարավո-
րություն չտալով մնալու Ուրալում: Հակառակ լե-
նինյան դիրեկտիվին, Տրոցկին և Սրեկլյան ճա-
կատի նրա գործակալները կասկածելի հրաման
տվին Կոլչակի դեմ ուղղված հարձակումը կանգնեց-
նել այն մոմենտին, յերբ Զապաևի դիվիզիվան և
Հարավային զորախմբի մյուս մասերն ընկեր Ֆրուն-
զեյի անձնական մասնակցությամբ, արյունահեղ կը-
դիմենք գրոհում ելին Ուժան, աշխատելով հետա-
ռա առաջարժման հնարավորություն ստեղծել:

Լենինի և Ստալինի առաջարկով Կենտրոնական
Կոմիտեն վերացրեց Տրոցկու հրամանը, արդելեց նը-
րան միջամտել Սրեկլյան ճակատի գործերին և
պաշտպանեց լենինյան դրութը հետագա հարձակման
մասին:

Հարավային զորախմբի հարձակողական գործ
դրությունների ժամանակ սպիտակ կազակությունը
բոռվություն բարձրացրեց նրա թիկունքում և պա-

շարեց Ռուալսկ քաղաքը: 22-րդ դիվիզիվայի մարտիկ-
ները և Ուրալի բանկորները մոտ յերկու ամիս դիմա-
գրում եյին խոռվարաբներին: Լենինը հոգում եր,
վորպեսպի պաշարված ուրալցիների համար ինքնա-
թիւններով մտակարարվելին պարեն, ուզմամթերք,
դեկորայք, թերթեր: Հունիսի 16-ին լենինը դիմեց
ընկեր Ֆրունզեյին հետևյալ հեռագրով:

«Խողում եմ հաղորդել Ուրալսկի ընկերներին,
պաշարված Ուրալսկի հիմնորյա պաշտպանության
հերոններին իմ ջերմ վողջույնը, խնդրում եմ չլը-
հաավել, դիմադրել մի քանի շաբաթ ևս, Ուրալսկի
պաշտպանության հերոսական գործը հաջողությամբ
կպատկի»:

Ուժան գրալելուց հետո Զապաևի դիվիզիվան
շուտով տեղափոխվեց Ուրալսկ և ողնեց պաշարված
ուրալցիներին՝ սպիտակզբարդիականների ողակը
հեղքելու: Հարավային զորախմբի ձեռք բերած հա-
ջողությունների հիման վրա հարձակման անցան Ա-
քանելյան ճակատի նաև հյուսիսային բանակները:
Հուլիսի 1-ին նրանք գրավեցին Պերմը և Կունգուրը:
Շնորհավորելով նրանց հաղթանակը, Լենինը պահան-
ջամ եր Կոլչակի դեմ տարվող հաղթանակն ինչ կերպ
ել լինի հասցնել մինչև լիակատար վախճան:

Նույնիսկ յերբ դենիկինյան ճակատն ամենավշ-
տանգավորն եր գաւուում, Լենինը կոչ եր անում շա-
բումակել հարձակումն Ուրալի և Սրբիրի վրա, վոր-
պեսպի դրանք վերջնականապես մաքրել կոլչակյան-
ներից:

Լենինի վողեշնչած կարմիր Բանակը նոր ուժով
հարձակում ծավալեց Կոլչակի դեմ և շուտով Ու-

1) «Պրավդա», 21 հունվ 1937 թ.

բալն աղասեց սպիտակեվմարդիականներից ու սպիտակներին քչեց Սիրիբից :

Հերոսական մարտիկները ուազմածակատից Լենինին հետեւյալ նամակն ուղարկեցին նրա հրամանը կատարելու մասին .

«Թանկաղին ընկեր և մեր փորձիած, հավատարիմ առաջնորդ,

Դու հրամայեցիր մինչեւ ձմեռ գրավել Ուրալը, — մենք կատարեցինք քո մարտական հրամանը: Ուրալը մերն ե... Առաջին անգամը չե՞ն, վոր մեղ վիճակվում ե քո հրամանով կովի բանվել անհավասար թշնամու հետ և մենք միշտ հաղթանակել ենք, լինելով ուժեղ մեր պայքարի իրավացիության, հեղափոխության հաղթանակի հավատում...»

Ուրալի նվաճումով մենք չենք ավարտի մեր գործը: Մենք, թանկաղին ընկեր Լենին, կդնանք դեպի Սիրիուս:

ՄԵՐ առաջնորդ, մենք թշնամուն հաղթեցինք մեր Արևելյան ճակատում, բայց Հանրապետությունը հարավում դեռ թշնամի ունի: Այստեղ նույնպես պարքարում են մեր յեղբայրները: Հաղորդիր նրանց մեր կոմունիստական մարտական վողջունը, մատնացույց արա, թէ մենք ինչպիսի փշոտ ճանապարհ ենք անցել և ինչպես ենք հաղթանակել, ինչ ջանքերով ենք ջարդել թշնամուն: Ասա նրանց, վոր նրանք մենամի չեն, վոր նրանց կաջակցենք բոլոր ուժերով... Վոդու արիություն ներշնչիր նրանց, ամբապնդիր նըրանց հաղթանակի կամքն ու ցանկությունը:

Մնանք մարտական պոստերում դեպի քեզ կո-

կոմունիստական վողջույնով՝ Արևելյան ճակատի Հարավային զորախմբի կարմիր բանակայիններ»¹⁾:

Կոլչակի դեմ կարմիր բանակի տարած հաղթանակը հսկայական նշանակություն ունեցավ: Բանգործներին և զյուլացիներին այդ հաղթանակի առթիվ ուղղած նամակում Լենինը խոսում եր այն դասերի մասին, վոր պետք ե առնել Ռւրալի և Սիրիուսի ծանր փորձից, — կոլչակովչչենայի լծի տակ նրանց ապրած փորձից: Առաջին դասը, վոր մատնանշում եր Լենինը, այդ հզոր կարմիր բանակ ստեղծելու անհրաժեշտությունն ե:

«Ուժեղ կարմիր բանակով մենք անպարտելի յենք, — ասում եր Լենինը: Առանց ուժեղ բանակի մենք կոլչակի, Դենիկինի, Յուդենիչի անխուսափելի դուռ ենք»²⁾:

Լենինը կոչ եր անուամ ել ավելի լարել ուժերը, կոլչակին վերջնականապես ջախջախելու համար: 1919 թվի վերջում կոլչակովչչենան վերջնականապես ջախջախվեց, իսկ ինքը, կոլչակը բռնվեց և զնդակարվեց:

Կոլչակի ջախջախումն Արևելյան ճակատում և Յուդենիչի ջախջախումը Պետրոգրադի մոտ նշանակում եր, վոր լիկվիդացիայի յե յենթարկվում Անտանտայի առաջին արշավանքը, վորը սկսվել եր 1919 թվի գարնանը: Այդ հաղթանակը ձեռք բերվեց ամբողջ յերկրի, ամբողջ կուսակցության լարված

1) Նամակի փոտո - պատճենից, տես «Партийно-политическая работа», 1938 թ., № 3, էջ 61.

2) Լենին, Сочинения, т. XXIV, стр. 432.

ջանքերի գնով։ Մեծ Լենինի և նրա ամենամոտ զինակից Ստալինի անսասան և անդադրում զեկավարությունն ապահովեց այդ հաղթանակը։

Վոչ պակաս լարվածություն պահանջեց նուև այն պայքարը, վոր մզվում եր մեր հայրենիքի մյուս չար թշնամու—Դենիկինի գեմ։ Դենիկինի հրոսակախմբերի հարձակումն սկսվեց գեռ 1919 թվի ապրիլին, յերբ Արևելյան և Պետրոգրադի ռազմաճակատներում վճռական կոփիներ եյին տեղի ունենում։ Դենիկինը սկզբում զավթեց Դոնբասը և Ռուսականայի հարավը, վորպեսզի դրանք պլացդարմ դարձնի դեպի Խորհրդային Ռուսաստանի խորքը ծավալուն հարձակման անցնելու համար։ Վերլուծելով Դենիկինի համեմատաբար արագ առաջարժման պատճառները, Լենինը նշում եր, վոր դրա պատճառներից մեկն ե զորքերի մի զգալի մասի փոխադրումը դեպի Արևելյան ճակատ։ Լենինը մյուս պատճառը համարում եր Հարավային ռազմաճակատում մնացած կարմիր զորքերի վոչ բավականաչափ համառությունն ու թույլ ակտիվությունը։ Վերջապես, յերրորդ պատճառը, Լենինի կարծիքով, այդ բանդիտիկմի և խոռվությունների առկայությունն եր Կարմիր Բանակի թիկունքում։

Լենինն ամենայնուանգում միջոցներ եր ձեռնալուկում թույլ չառալու, վոր Դենիկինն առաջ շարովի դեպի Ռուսականայի և ՌԽՖՍՀ խորքը, պահանջելով։ Վոր ռուսականական իշխանությունները և զինվորուկան գերատեսչությունը վճռական զործողությունների դիմեն թե գենիկինյան զորքերի և թե խոռվարաբների դեմ։ Այսպէս, որինակ, մայիսին, յերբ

խոռվություն ծագեց Վեշենոկայա ստանիցայի ռազմականը, Լենինը կարգադրեց ամենաարագ կերպով յոնում, Լենինը կարգադրեց ամենաարագ կերպով յոնում, Լենինը կարգադրեց ամենաարագ կերպով յոնում, Վենիկինին հնարածնչել խոռվությունը, վորպեսզի Դենիկինին հնարածնչել խոռվությունը չամար և հենց դրանով ջռւր խոռվությունը ճնշելու համար և հենց դրանով ջռւր խոռվությունը դենիկինի ջրաղացին։

Նույն եր և Ռուսականայում։ Յերբ Ընկեր Վորոշիլովի դեկավարությամբ լիկվիդացիայի յենթարկ-վեց Գրիգորեկի խոռվությունը, Լենինն ուկրաինական վեց Գրիգորեկի խոռվություններից պահանջեց, վորպեսզի նրանք իշխանություններից պահանջեց, վորպեսզի նրանք առավելադրույն չափով ոգտագործեն Գրիգորեկի գեմ տարված հաղթանակի հետևանքները՝ Դոնբասում դործողություններն ուժեղացնելու համար։

«... Զեռքից բաց չթողնենք Գրիգորեկի դեմ տարած հաղթանակի մոմենտը, — դրում եր Լենինը՝ Գրիգորեկի դեմ կուզող զինվորներից վոչ մեկին չարձակեք։ Դեկրետավորեք և կենսագործեցեք բնակչության լիակատար զինաթափումը, տեղում անխնականակարեցեք ամեն մի թաղցրած հրացանի համար։ Մոմենտի ամբողջ գլխավոր մեխն ե՝ արագ հաղթանակ Դոնբասում, բոլոր հրացանների հավագեցեք բոլոր ականակոր բոլշևիկներին»։

Ստակայն Տրոցկին և Ռուսականայում նրա արքայակ Ռակովսկին հանցագործ կերպով զանդաղեցնում

Եյին Լենինի կատեղորիկ պահանջների կատարումը։ Հետեանքն այն յեղավ, վոր հունիսի սկզբին Մախոնին Դենիկինի առաջ բացեց ուղմանակառուց։ Դենիկինը չհապաղեց դրանից ովտվելու և զբավեց Սինելնիկովոն, Խարկովը, Յեկատերինոսլավը, խոկ իր աջ թեռում—Յարիցենը։ Դենիկինը, ինչպես և Կոլչակը, իր զավթած տերիտորիայում վերականգնեց կալվածատիրական-կապիտալիտական ստրկությունը, կախելով ու դնդակահարելով խորհրդային իշխանությանը համակրող բանվորներին ու դյուղացիներին։

Խորհրդային Հանրապետության գլխին բարձրացավ մի նոր, ահեղ վտանգ, — դենիկինչինան։ Հարավային ուղմանակառու հիմա դառնում և դլառավոր ուղմանակառու։ Հուլիսի 9-ին Լենինը կուսակցության կենտրոնի անունից մի նամակով դիմում և կուսակապմակերպություններին «բոլորը դեպի կուիլ Դենիկինի դեմ», վորի մեջ բնորոշում և ստեղծված դրությունը վորպես սոցիալիտական հեղափոխության ամենաճգնաժամային մոմենտ։

Լենինը մատնանշում և, վոր հիմա ոտարերկյա իմպերիալիստներն իրենց հույսը դրել են Դենիկինի վրա և այս պատճառով նրան հոկայական սղնություն են ցույց տալիս մարդկանցով, զենքով, ուղղմամըթերքով, հանդերձանքով, տանկերով, ինքնաթիռներով, ինչպես առաջ ոգնում ելին Կոլչակին։ Դենիկինին հաղթելու համար, — ասում եր Լենինը, — անհրաժեշտ ե բոլոր ուժերի նոր, արտակարգ լարում, անհրաժեշտ ե բոլոր հիմնարկությունների աշխատանքը վերակառուցել պատերազմի անմիջական խըն-

դիրներին համալպատասխան, Դենիկինի արշավանքն արագորեն հետ մղելու համար։

Լենինը կոնկրետ և սպասիչ ցուցումներ և տալիս թիկունքում և ճակատամերձ զոտում կատարվող աշխատանքի մասին։ Կարմիր Բանակի աշխատողների տառջ Լենինը մի շարք պատասխանատու խնդիրներ և դուռմ զգաստությունը և կարդապահությունը բարձրացնելու, կուսակցական-քաղաքական աշխատանքը բարելավելու, ուղղմական մասնագետների վրա կոմիսարների հոկողությունն ուժեղացնելու դորում։

«... այնտեղ, ուր ամենից խիստ և կիրառված կուսակցական քաղաքականությունը սաղմական մասնագետների նկատմամբ և պարտիզանչինան արմատափակիլ անելու նկատմամբ, — սովորեցնում եր Լենինը, — այնտեղ, ուր ամենից կայուն և կարդապահությունը, ուր առավելագույն հոգատարությամբ և կատարվում քաղաշխատանքը զորքերի մեջ և կոմիսարների աշխատանքը, — այնտեղ ընդհանուր առմամբ սաղմական մասնագետների մեջ ամենից քիչ ցանկացողներ են լինում դավաճանելու, այնտեղ այդպիսի ցանկացողների համար ամենից քիչ հնարավորություն կա իրականացնելու իրենց դիտակորությունները, այնտեղ չկա թափթիվածություն բարհակում, այնտեղ ավելի լավ և նրա կառուցվածքը և նրա վոգին, այնտեղ ավելի շատ են հաղթանակները...»¹⁾։

Լենինի նամակը մարտական դիրեկտիվ եր ամբողջ յերկրի համար։ Կուսակցությունը, խորհրդա-

1) Ленин и Столин, т. II, стр. 256.

յին ժողովուրդը հազարավոր կոմունիստներ, բանվորներ, կոմյերիտականներ ուղարկեցին ուղմանակատ, Դենիկինի գեմ: Լենինի հրամանով Արևելյան ռազմաճակատից Հարավային ռազմաճակատ փոխգրվեցին ազատված զորամասները: Բանվորներն ավելացրին Հրացանների, գնդացիքների, ռազմաճթերքի արտադրությունը, նրանք դրահաղնացքներ եյին նորոգում և կառուցում: Յերկիրը ռազմաճակատին տաւեմ եր այն ամենն, ինչ վոր ուներ:

Բայց, չնայելով յերկիրի ոգնության, Հարավային ճակատի բանակները նահանջում եյին սպայական և ոպիտուկ-կաղակական ընտիր գիվիդիաների ճնշման տակ: Դենիկինը շարունակում էր իր հաջող հարձակումը: Հետ մղելով Կարմիր Բանակի զորամասների թույլ առաջակալը, Մամոնտովի սպիտակ-կաղակական հեծյալ կորպուսն անցավ Հարավային ճակատի թիկունքը:

Դենիկինի հաջողություններին շատ բաներով նըպաստեց Տրոցկու և նրա նշանակած մարդկանց հանցադործ աշխատանքը: Նրանք Հարավային ճակատի բանակները դրեթե քայլայման հասցրին: Սեպտեմբերի 16-ին Լենինը բարկությումը և ցասումով լի հետեւյալ նամակն ուղարկեց Հանրապետության Ռազմա-հեղափոխական Խորհրդի անդամ բնիկը Գուսեի անունով.

«Բնկ. Գուսե, խորամուխ լինելով Սկլյանսկու նամակին (գործերի գրության մասին—15. IX) և ոմ-փոփառերի հանրապետարներին, յես համոզվում եմ, վոր մեր ՀՌՀԾ վատ և աշխատում:

Հանդստացնել և հանդստացնել, այդ—լատ տակտիկա յե: Դուրս ե դալիս «Հանդստացման խող»:

Փոկ իրականում մեզ մոտ անշարժություն ե- կամարյա կազմալուծում... Ուղղակի խայտառակու- թյուն: Իսկ մեզ սկսել են խփել: Մենք դրա համար պատասխանատու կղարձնենք ՀՌՀԾ, յեթե յեռան- գուն միջոցներ չձեռնարկվեն: Հաղթանակը ձեռքից ըստ թողնելը—խայտառակություն ե:

Մամոնտովի նկատմամբ անշարժություն ե: Էսա յերեսույթին ուշացումների հետեւից: Ուշացան այն զորքերը, վորոնք հյուսիսից դնում ե- յին զետի Վորոնեժ: Ուշացրին 21-րդ գիվիդիայի փո- խազդումը դեպի հարավ: Ուշացրին ավտո-դնդացիր- ները: Ուշացրին կաղը... Սելիվաչևի հետ կապ չը- հաստատեցին, նրա վրա հսկողություն չսահմանե- ցին, հակառակ կենտկոմի վազուցվա և ուղղակի պա- ցին, հակառակ կենտկոմի վազուցվա և ուղղակի պա- ցին... Յեթե Սելիվաչև փախչի կամ նրա դե- պիկաների համանատարները դալածանեն, մեղավոր կինի ՀՌՀԾ, վորովհետեւ նա քնում եր ու հանգըս- տացնում, իսկ զործ չեյին անում: Գետք ե հարավ ուղարկել լավագույն, ամենայեռանդուն կոմիսարնե- րին և վոչ թե քնկու մորեկներին:

Զորքեր կազմելը նույնպես ուշացնում ենք: Անց ենք կացնում աշունը, իսկ Դենիկինը կյեռապատ- կի ուժերը, կստանա նաև տանկեր և այլն և այլն: Այգուես չի կարելի: Գետք ե աշխատանքի քնած տեմ- պը վերափոխել կենդանի տեմպով...

Լենին

Քսա յերեսույթին, մեր ՀՌՀԾ «Հրամայում ե», չհետաքրքրվելով, կամ ցցանկանալով հետեւ կա- ռաքմանը: Յեթե այդ մեր լնդհանուր մեղքն ե, տ-

պարզմական գործում այլ ուղղակի կաթա-
նում՝ $k > 1$):

Տրոցկու այլպիսի զավաճանական աշխատանքի հետևանքով Դենիկինը սեպտեմբերի 21-ին գրավից կուրսկը, հոկտեմբերի 6-ին՝ Վորոնեժը հոկտեմբերի 13-ին՝ Որյովը, սպառնալով Տուլային և Խորչըրդային Հանրապետության սրտին՝ Մոսկվային։ Միևնույն ժամանակ Յուղենիչը նոր արշավանք երդորում Պետրովադի վրա։ 1919 թվի աշնանը՝ Դենիկինի և Յուղենիչի միաժամանակ հարձակվելուն՝ Անտանտայի յերկրորդ համակցված արշավանքն երդորչըրդային յերկը դեմ։

Այդ ահեղ ժամին կուսակցության կենտրոնը Առնինի առաջարկով Հարավային ճակատ ուղարկեց ընկեր Ստալինին : Ընկեր Ստալինի պահանջով Տրոցիկին հեռացվեց Հարավային ճակատի գործերին մասնակցություն ունենալուց, իսկ Նրա նշանակած մարդկի հեռացվեցին աշխատանքից : Նրանց վախարեն ուղմաձակատ ուղարկվեցին ականավոր բոլշևիկ-լենինյանները, — Վորոշիլովը, Որջոնիկիձեն, Կազմանովիչը, Կիրովը և ուրիշները, վորոնք ընդունակ եին կազմակերպելու հաղթանակը :

Բնկեր Ստալինը նրանց ողբությամբ բոլշևիկյան կարգ ու կանոն ստեղծեց ռազմաճակատում:

Ուզգմաճակատում յեղած քառորդի և կողմալութ-
ման ու այնտեղ ընկեր Ստալինի կողմից կարդ ու
կանոն հաստատվելու մասին ընկեր Որջանիկիձեն
